




ԱԼԵԲՍԱՆԴԻ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԲԵԳԼԱՐ
ԱՄԻՐՉԱՆ







ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵԺՍԱՆԴԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԲԵԴԼԱՐ ԱՄԻՋԱՆ

A
13937



ԵՐԵՎԱՆ—1975

782 Ap 1
U. 52 P

P 0814-007 8-74 (S)
728 (02) 75

АЛЕКСАНДР ГРИГОРЬЕВИЧ ТАТЕВОСЯН
БЕГЛАР АМИРДЖАН
(На армянском языке)
Армянское театральное общество
Ереван, 1975

© Հայկական թատերական ընկերություն, 1975

Բեզլար Ամիրջանի՝ որպես Կրգչի ամուսնը
հայտնի է դարձել դեռևս անցյալ դարի 90-ական
թվականների սկզբին:

Այդ ժամանակից ի վեր Ամիրջանի ելույթները
ամենուրեք արտակարգ հետաքրքրություն են
հարուցել մանավանդ հայրենակիցների միջա-
վայրում, ուր նա առանձնապես էր սիրված: Հայ
Կրգարվեստի երախտավորների՝ Նադեժդա Պա-
պայանի, Ներսես Շահլամյանի, Ելենա Տերյան-
- Կորգանովայի և ուրիշների հետ մեկտեղ նա
մեծ ջանքեր է նվիրել ժողովրդի գեղարվեստա-
կան կուլտուրայի հարստացմանը:

Իր զորեղ ու գեղեցիկ ձայնով, երգչաձայն հրա-
շալի ձիրքով, դրավիչ դերակատարումներով Ա-
միրջանը հաջողություն է ունեցել թե խալական
և թե ուսական օպերային բեմերում: Ժամանակին

ճա համարվել է ռուսական երաժշտական թատ-
րոնների ամենաշնորհալի բարիտոններից մեկը,
որ անմոռանալի է մնացել արևմտաեվրոպական
և ռուսական լիլասիկ օպերաների մի շարք դերեր-
գերի հմուտ ու նրբալիկատ կատարումով:

Հիմնականում գործելով ռուսական միջավայ-
րում, նա երբեք չի կտրվել հայ իրականությունից
և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում բազմա-
թիվ համերգներ է տվել:

Ամիրջանն անցել է երգչական սուլիդ դպրոց,
աշակերտել վոկալ արվեստի համերաճանաչ վար-
պետների՝ սկզբում Կ. էվերարդիին, ապա՝ Ս. Գա-
բելին (Պետերբուրգի կոնսերվատորիայում) և վեր-
ջապես՝ Ս. Ռոնկոնիին (Միլանի կոնսերվատորիա-
յում):

Ստեղծագործական տևական շփման մեջ լինե-
լով ժամանակի ռուս հայտնի երգիչների ու երա-
ժիշտների հետ, Ամիրջանը, բնականաբար, օգ-
տվել է նրանց փորձից, յուրացրել ռուսական օպե-
րային արվեստի կատարողական հիանալի ավան-
դույթները: Մոսկվայի Մեծ թատրոնում նրա խաղ-
ընկերներն են եղել Սոբինովն ու Կլեմենտևը, Ֆոս-
տրեմն ու Դեյշա-Սիոնիցկայան, Դոնսկոյն ու
Զբրուևան և ուրիշներ:

Բեզլար Ամիրջանը սրտանց տիրել է հայրենի
երկր, հաճույքով և ազգային արժանապատվու-
թյամբ տարածել այն, շարունակ հնչեցրել Վր հա-
մերգներում:

Նրա գործունեության առավել բեղմնավոր ժա-
մանակահատվածն ընդգրկում է երկու տասնամ-
յակ՝ 1890—1910 թվականները: Թողնելով օպե-
րային բեմը, Ամիրջանը հետադաշում ևս՝ արդեն
սպասկառելի տարիքի հասած, շարունակել է նույն
եռանդով աշխատել, իրեն նվիրելով երաժշտա-
կան մասնկավարժությանը:

Անուն հանած այդ երգչի, հայազգի առաջին
բարիտոնի անցած արտիստական ճանապարհը մեր
երաժշտագիտական դրականության մեջ դժբախտա-
բար, մինչև այժմ լայն լուսաբանության չի արժա-
նացել: Մինչդեռ արտակարգ արդյունավետ է ե-
ղել այդ ճանապարհը, ստեղծագործական ձեռք-
բերումների տեսակետից շատ ուսանելի, և ան-
տարակույս, նպաստել է հայրենի երաժշտական
պրոֆեսիոնալ արվեստի հետագա առաջադիմու-
թյանը:

Երգիչ Բեգլար Ամիրջանյանը, կամ լինչպես հետագայում ինքն իրան կոչել՝ Ամիրջանը, ծնվել է Թլիֆլիսում, 1868 թվականի հուլիսի 2-ին, պղնձագործ արհեստավորի ընտանիքում։ Ընդամենը քառամյա մանչուկ էր Բեգլարը, երբ հայրը վաղաժամ վախճանվեց՝ ընտանիքը թողնելով անապահով վիճակում։ Դժվարին ու անուրախ տարիներ ապրեց ընտանիքը, կարիքի ու նեղության մեջ։ Բայց մայրը կարողացավ մեծացնել իր երեք զավակներին, ուսման տալ։ Ութ տարեկան Բեգլարն ընդունվեց Ներսիսյան դպրոց։ Մայրը, որ մինչ այդ նկատել էր երեխայի երաժշտական հակումները, տոն օրերին նրան տանում էր մերձակա Հրեշտակապետ եկեղեցին՝ պատարագի երգեցողությունն ունկնդրելու։

Բեգլարը Ներսիսյան դպրոցի ուշիմ ու ընդունակ աշակերտներից էր և բացի այդ, երգեցողության ուսուցիչ Նզնիկ քահանա Երզնկյանի սիրելին։ Իր ուսուցչի օգնությամբ Բեգլարը յուրացնում է հայկական նոտագրությունը, անթերի սովորում եկեղեցական եղանակները։ Բայց պատանուն ամենից ավելի զրավում էին քաղա-

քայլին կենցաղում տարածված հայրենի խրդերը, որ նա երգում էր այնքան անմիջական զգացմունքով, բավականություն պատճառելով իր մերձավորներին:

Տասնամյա ուսումնառությունից հետո Բեգլարն ավարտում է Ներսիսյան դպրոցը (1886 թվականին), ապա և Կոջորի ամառանոցում դառնում խմբավար, իրենք էլ նաև հանդես գալիս լիբրե մեներգիչ: Հավանաբար նա այդպես էլ շարունակելու աշխատել, եթե չներկայանար բարեպատեհ մի առիթ, որ նոր ճանապարհի սկիզբ դրեց իրիտասաղի վյանքում: Այդ նույն ամռանը Պետերբուրգից Թիֆլիս են ժամանում կոմպոզիտոր Մակար Եկմալյանը և Պետերբուրգի հայ համայնքի հեղինակավոր դեմքերից մեկը՝ բժշկապետ-պրոֆեսոր Վարդան Վարդանյանը, նպատակ ունենալով ձայնեղ իրիտասարդների գտնել Պետերբուրգի հայկական երեղեցու երգչախմբի համար: Եկմալյանի և Վարդանյանի առաջարկով Ամիրջանը օգոստոսի սկզբին Պետերբուրգ է մեկնում:

Սկսեալ այդ խրդիչը իրոք գնահատելի ուժ էր հայ երեղեցական երգչախմբի համար: Բացի իրգչախմբին մասնակցելուց նա այստեղ խրդում էր պատարագի ամենակարևոր մեներգային կտոր-

ները, որ արդեն դիտեր դեռևս Ներսիսյան դպրոցում ուսանելիս: Շուտով, նկարիչ Հ. Այվազովսկին, այցելելով եկեղեցի, լսում է Ամիրջանին, ապա պատարագի հերթական արարողությանն է հրավիրում Ա. Ռուբինշտեյնին՝ իր վաղեմի բարեկամին: Վերջինս, հիացած հայ երիտասարդի երգչական շնորհքով, գտնում է, որ նրան անպայման անհրաժեշտ է մասնագիտական կրթություն ստանալ Պետերբուրգի կոնսերվատորիայում:

Եվ ահա, արդեն սեպտեմբերի 12-ին Ամիրջանը հաջող քննություն է տալիս կոնսերվատորիայում, ընդունվում է հայտնի պրոֆեսոր Կ. էվերարդիի դասարանը: Նրան, որսեա կարիքավոր և խոստումնալից ուսանողի, կոնսերվատորիան ապահովում է թոշակով:

Ուսման առաջին տարվին առանձնապես դժվար է ըինում Ամիրջանի համար: Պետք էր տիրաստեղծել եվրոպական նոտագրությանը, օր-օրի յուրացնել ձայնի մշակման միանգամայն նոր սկզբունքները, հաղթահարել կոկորդային տիպի երգեցողությունը: Երկու տարվա ընթացքում նկատելիորեն ընդլայնվում է Ամիրջանի երգչական ձայնածավալը, սկսում են հետզհետե ամրանալ բարձր և ցածր ռեգիստրների ձայները: էվերար-

գիտին տարախաղնում են լիր նոր աշակերտի ոչ մի-
այն լավագույն տվյալները, այլև ակնառու առա-
ջադիմությունը:

1888-ին, երբ էվերարդին հեռանում է Պետեր-
բուրգի կոնսերվատորիայից, Ամիրջանի դասա-
տուն է դառնում Ս. Գաբելը: Վերջինիս դատարա-
նում Ամիրջանը սովորում է երկու տարի, սակայն
այդ ժամանակամիջոցում պրոֆեսորն ու Ամիրջա-
նը չեն վարողաճում իսկական փոխըմբռման հաս-
նել: Նկատի տմենալով այդ, ինչպես նաև Պետեր-
բուրգի կլիմայական պայմանները, Ամիրջանը
դադարեցնում է պարապմունքները և Կոտոնյի
տորիայում, որոշում է հետագա կատարելագործ-
ման համար մեկնել Իտալիա՝ Միլան: Մինչ այդ
երիտասարդը դիմում է Պետերբուրգ հյուրախա-
ղերի եկաժ խտալական հայտնի բարիտոն Կոտոն-
յին՝ խնդրելով նրա խորհուրդը և Կոտոնյին երի-
տասարդի մտադրությանը հավանություն է տա-
լիս:

Այսպիսով, 1890-ին կիսատ թողնելով ուսումը,
Ամիրջանը պատրաստվում է մեկնել Միլան: Բայց
դրա համար միջոցներ էին հարկավոր: Երիտա-
սարդը հույս ուներ, որ իր նպատակի իրագործ-
մանը օգնություն ցույց կտան հայ մեծահարուստ-

ները, այդ թվում Ա. Մանթաշյանը: Մինչդեռ նրա խնդրանքին ոչ ոք չէնդառաջեց, ուստի երիտասարդի հույսերն փ դերեւ անցան: Ամիրջանին մընում էր համերգներ տալ՝ այդ միջոցով գոնե շատ համեստ դրամար վաստակելու տակնաշնորհամբ: Երիտասարդ երգիչն ուրախ էր, որ իր համերգներով կարողացավ փոխույն գրավել ինչպես Պետերբուրգի, այնպես էլ Կովկասի բաղաժների արվեստասերներին:

Մոտ չորս տարի տվորելով Պետերբուրգում, Ամիրջանը որպես երգիչ մասնադիտորեն աճել և անշուշտ, մեծ արդյունքի էր հասել, թեպետև այս փաստի բուն նշանակությունը ըստ երևույթին նա ինչ-որ չափով թերագնահատում էր: Իսկ փաստն այն էր, որ նրա ձայնը համեմատաբար ամրացել ու բավականին հնչեղ էր դարձել, կատարումը երաժշտական առումով զգալիորեն հղկվել էր և երիտասարդ երգիչն արդեն հասցրել էր մշակել համերգային սրբիդ մի երգացանկ: Այս ամենի ապացույցը 1890-ի մարտին և ապրիլին Պետերբուրգում կայացած նրա համերգներն էին, որոնց մասին գովեստով են խոսել մայրաքաղաքի թերթերը:

«Ներկայումս, — գրել է պետերբուրգյան թեր-

թերից մեկը, — երբ ամենուրեք խոսում են մեզա-
նում լավ ձայների սակավության մասին, առավել
ևս հաճելի էր հանձին Ամիրջանյանի հանդիպել
այդպիսի մի ձայնի, որին լսեցինք մարտի 21-ի
համերգում: Ամիրջանյանը գեղեցիկ բարիտոն է,
ընդարձակ և երգուն»:¹

Նույն այդ համերգը գրախոսել է մի այլ թերթ,
հաղորդելով, որ հայ երիտասարդ երգիչն իր հմա-
յիչ ձայնով շատ հաճելի տպավորություն է թո-
ղել:²

Պետերբուրգյան համերգներից հետո Ամիրջա-
նը ելույթներ է ունենում Թիֆլիսում (սեպտեմբեր
և դեկտեմբեր ամիսներին) և Բաքվում³ (հոկտեմ-
բերին): 1891-ի մայիսի 12-ին կայանում է նրա
հրաժեշտի համերգը Թիֆլիսում:

Այնուհետև, նույն տարվա օգոստոսին Ամիր-
ջանը մեկնում է Միլան և սեպտեմբերի սկզբին
ընդունվում կոնսերվատորիա: Այստեղ նրա երգ-
չական ու երաժշտական ձիրքը արժանանում է

¹ «Новости», 1890, 23 մարտի:

² «Сын отечества», 1890, 23 մարտի:

³ Ինչպես նշել է «Каспий» թերթը, Բաքվում, 1890-ի
հոկտեմբերի 13-ին տրված համերգին մասնակցել է նաև
Բ. Կարա-Մուրզայի երգչախումբը:

վոկալի ճանաչված մասնագետների հատուկ ուշադրութեանը: «Ինչպես մեզ գրում են Միլանից,— նշել է «Новости и биржевая газета» թերթը,— Պետերբուրգի կոնսերվատորիայի նախկին ուսանող Բ. Ամիրջանյանը, որ ուժգին ու գեղեցիկ բարիտոն է, օրերս կոնկուրսային քննութեամբ առաջինն է ընդունվել Միլանի կոնսերվատորիան: Վոկալ արվեստի պրոֆեսոր Ռոնկոնին, որ հայտնի է Իտալիայում, երիտասարդ երգչին փայլուն ապագա է կանխագուշակում»¹:

Որոշ ժամանակ անց, 1892-ի հունիսին, Պետերբուրգի մամուլում հերևում է Միլանից ստացված մի նոր հաղորդում Ամիրջանի մասին, որ ասված է, որ «իր համերգներով Պետերբուրգին արդեն հայտնի բարիտոն Ամիրջանյանը այստեղ մեծ առաջադիմության է հասել»²:

Ուսման երկու տարին ավարտելով, Ամիրջանը հայ երգչուհի օր. Նադեժդա Պապայանի հետ 1893-ի ամռանը Միլանից հայրենիք է մեկնում: Նրանք որոշում են ամռան ամիսներին երկուսով միատին համերգներ տալ: Սկզբում հանդես են

¹ «Новости и биржевая газета», 1891, 22 հոկտեմբերի:

² «Петербургская газета», 1892, 3 հունիսի:

գալիս Աստրախանում, հետո նաև Բաքվում ու Թիֆլիսում: Հատկապես հիշարժան են Թիֆլիսում կայացած համերգները (հուլիսի 12, 16 և 21), որ տանկոդիրներին մեծ բառակաճառություն են պատ-
հառել¹: Տեղական գրեթե բոլոր թերթերն անդրա-
դարձել են այդ համերգներին, հիացմունք արտա-
հայտելով բացառիկ տվյալներով օժտված հայ
երգիչների կատարողական արվեստի նկատմամբ:

Ամիրջանը Միլանի կոնսերվատորիան ավար-
տում է 1894-ի հունիսին, ստանալով առաջին կար-
գի դիպլոմ և արժաթյա մեծ մեդալ²:

Նույն թվականի սեպտեմբերից, ըստ ստորա-
գրված պայմանագրի նա սկսում է մասնակցել
Իտալիայի տարբեր քաղաքներում հանդես եկող
օպերային նորաստեղծ մի խմբի ներկայացումնե-
րին: Իր դերակատարումներով, ինչպիսիք են Վա-
լենտինը՝ «Փառաստ»-ում, Ալֆոնսը՝ «Փավորի-
տուհի»-ում, նա նվաճում է հանդիսականների
համակրանքը:

¹ Հուլիսի 21-ի համերգին մասնակցել է նաև երգիչ
Ն. Շահլամյանը:

² Այս մասին տես «Кавказ» թերթի 1895 թվականի
սեպտեմբերի 15-ի համարի հաղորդումը:

«Իտալական թերթերը, — գրել է այդ առթիվ «Русские ведомости» թերթը, — լի են գրախոսություններով, որ վերաբերում են Պիներյուոյում (Տուրինի մոտ) տված «Ֆաուստ» օպերայի ներկայացմանը՝ մեր երկու հայրենակիցների՝ տենոր Արչակ Կոստանյանի և բարիտոն Բեզլար Ամիրջանյանի մատնակցությամբ... Բ. Ամիրջանյանը, որ հաջող ելույթներ է ունեցել անցյալ տարի Չիոջիայում (Վենետիկի մոտ), ինչպես նշել է «il mondo Artistico» լրագիրը, եղել է «գերազանց վալենտին», հարուցելով հասարակության ջերմ խրախուսանքը: Այդ երկու արտիստներն էլ, ի դեպ, արդեն հայտնի են ինչպես ռուսական, այնպես էլ կովկասյան լսարանին»¹:

Վենետիկի մոտ դոնվոդ ծովեզրյա Չիոջիա քաղաքի օպերային թատրոնում ելույթներ ունենալու ժամանակ Ամիրջանյանը Ս. Ղազար է հրավիրվում Մխիթարյանների կողմից: Պատվարժան հյուրին կղզի է հասցնում Մխիթարյանների ուղարկած հատուկ գոնդոլը: Այս այցելության մասին Ամիրջանյանը պատմում է իր ինքնակենսագրության մեջ. «Պատարագից հետո, — գրում է նա, — ներ-

¹ «Русские ведомости», 1895, 29 մարտի:

կայացաւ միաբանութեան և նոցա զլիսավոր հայր
Ղ. Ալիշանին: Նրանք ցանկացան յուրջանց մեծ
դահլիճում ինձ լսել՝ թե օպերային արիւմտներ և
թե հայկական ազգային երգերից: Եւ որախու-
թեամբ կատարեցի նոցա ցանկութեամբ, երգեցի
«Դե» օպերայից արիան, «Ֆաուստից» ադմբը և
մեր ազգային երգերից «Ձայն տուր, յվ ծովափը»,
«Ի ննջմանն արքայականը»: Այնուհետև հրավիր-
վեցաւ ճաշի... Ապա շրջեցինք ամբողջ վանքը, ճե-
մարանը, նոցա հայտնի տպարանը և թանգարա-
նը, իսկ երեկոյան աջը համբուրելով հայր Ալի-
շանի, մնաս բարով ասելով միաբանութեան, նըս-
տեցի նավը և վերադարձաւ թատրոն, որ նույն
երեկոյան երգում էի «Ֆաուստ» օպերայում»:¹

1895 թվականին իտալական օպերային մի ալ
խումբ՝ Մուշի Լաբրունայի ղեկավարութեամբ,
պատրաստվում է Մոսկվա մեկնել՝ աշխան-ձմե-
ռային թատերաշրջանում հյուրախաղեր անցկաց-
նելու: Նրա կազմում աշխատելու համար հրա-
վիրվում է նաև Ամիրջանը՝ որպէս առաջատար
արտիստ: Նա պայմանագիր է ստորագրում և

¹ Չարենցի անվան զրականութեան և արվեստի թան-
գարան, երաժշտական արխիւ, Բ. Ամիրջանի ֆոնդ:


հոկտեմբերին խմբի հետ մեկնում է Մոսկվա: Խումբը, որ իր ներկայացումները պետք է անցկացնեն Մոսկվայի Նոր էրմիտաժ թատրոնում, խաղացանկում ունեն «Ռիգորետտո», «Տրավիատա», «Տրուբադուր», «Աիդա», «Էռնանի», «Ֆաուստ», «Աֆրիկուհին» և «Պայացյներ» օպերաները:

Մինչև Նոր էրմիտաժում ներկայացումների սկսվելը Ամիրջանն ուղևորվում է Սարատով՝ համերգների, որ տեղի են տանում նոյեմբերի 5-ին և 12-ին: Ահա «Саратовский дневник» թերթում գետեղված հաղորդումը նրա առաջին համերգի վերաբերյալ. «Կիրակի օրը դաշնակահարուհի Մ. Ա. Բելոցերկովսկայայի և Բ. Բ. Ամիրջանի տված համերգը երաժշտական-վոկալ տեսակետից խոշոր հաջողությամբ անցավ: Համերգի հերոսը Ամիրջանն էր՝ հազվագյուտ գեղեցիկ, շատ ուժեղ և լայն ձայնածավալի այդ բարիատոր: Թեև Ամիրջանը դեռևս բոլորովին երիտասարդ արտիստ է, բայց երգեցողության արվեստին նա հմտորեն է տիրապետում, իսկ արտահայտչությունն ու ձաշակը մի առանձին հմայք են պարգևում նրա կատարմանը»:¹

¹ «Саратовский дневник», 1895, 7 նոյեմբերի:



Ռուսլան («Ռուսլան և Լյուդմիլա»)





ՕՆԵԳԻՆ («ԵՎԳԵՆԻ - ՕՆԵԳԻՆ»)

Նոր էրմիտաժ թատրոնում, իտալական խմբի կազմում Ամիրջանն առաջին անգամ բեմ է դուրս գալիս նույնաբերի վերջին: Նրա ելույթների նկատմամբ հետաքրքրությունն այնքան էր աճել արդեն, որ «Театральные известия»-ն նույնիսկ մի բանաստեղծութուն էր տպագրել նվիրված Ամիրջանին, և, ի դեպ, կար այսպիսի քառատող.

Его Италия слыхала
и восхищалась им не мало.
Москву пленит Амирджан,
как он пленил Турин, Милан¹.

Իր առաջին ելույթում Ամիրջանը կատարում է Վալենտինի դերը «Ֆաուստ» օպերայում: Մասկվայի թերթերը, մասնավորապես «МОСКОВСКИЙ ЛИСТОК»-ը և «РУССКИЙ ЛИСТОК»-ը ջերմ համակրանքով են գրել այդ դերակատարման մասին: «Օրերս, — գրել է «МОСКОВСКИЙ ЛИСТОК»-ը, — նոր էրմիտաժի թատրոնում, Գոմեոյի «Ֆաուստ» օպերայում բարիտոն Ամիրջանի դերյուտն էր: Անտարակույս, այն լիապես հաջողվեց: Իր բոլոր տեսարանների համար ալ. Ամիրջանը վարձատրը-

¹ «Театральные известия», 1895, 27 նոյեմբերի:

2 — Բեզլար Ամիրջան

վեց ազմկոտ ծափահարություններով և կրկնեց
երկրորդ գործողության արիողոն: Նա ունի թեև
ոչ առանձնապես ուժեղ, բայց ծավալով բավականին
մեծ ձայն: Վերին նոտաները ազատորեն է
վերցնում և դրանք իրենց տեմբրով գեղեցիկ են:
Ամիրջանը երգում է հրաժշտականորեն, ջերմ է
ֆրազավորում: Շատ լավ պիտի համարել նրա
խաղը և միմիկան: Գեղեցիկ կազմվածքի տեր այդ
արտիստը իրեն սքանչելի է պահում բեմում ու
գեղարվեստորեն է խաղում: Վայելուչ ու մտած-
ված է նրա շարժումները: Մահվան տեսարանը նա
շատ համոզիչ տարավ, անվիճելիորեն տաղան-
դավոր: Առհասարակ, նրա կատարման մեջ ըզ-
րացվում է բնածին տաղանդալիքություն, դրա-
մատիկական լավ դպրոց»:¹

Խոսելով Ամիրջանի մոսկովյան այդ դերյու-
տի մասին, «РУССКИЙ ЛИСТОК»-ը հայ երիտա-
սարդ արտիստի արվեստը բնութագրել է որպես
բեմական արտակարգ երևույթ: «Պարոն Ամիրջա-
նի հաջողությունը,— գրում է նա,— հակադասա-
կերպ էր: Նրա ձայնը երիտասարդ է, թարմ, հավա-
սարահնչուն և տեմբրային: Նրա ձայնը հմտորեն է

¹ „МОСКОВСКИЙ ЛИСТОК“, 1895, 1 գեկտեմբերի :

փշխում ձայնին՝ ինչպես փորձված արտիստը։ Ամիրջանը հիրավի, մի ակնառու և շքեղ բեմական երեսվյթ է։ Մահվան տեսարանում նա շատ ուժեղ տպավորություն գործեց և մի քանի անգամ բեմ հրավիրվեց»¹։

Օպերային արվեստի սիրահարներին նույնքան գրավել են նոր էրմիտաժի բեմում Ամիրջանի ունեցած հաջորդ դերակատարումները ևս՝ ժերմյունը («Տրավիատա»), Ռիգոլետտոն («Համանուն օպերայից»), Ամոնասրոն («Ափղա») և այլն։ Եվ այսպես, Ամիրջանի՝ որպես խրդչի անունը Մոսկվայում սկսում է ժողովրդականություն ու համակրանք վայելել։

1896-ի փետրվարի 20-ին Ամիրջանը հրավեր է ստանում երգել բաբեգործական նպատակով կազմակերպված մի խառն համերգում, որի մասնակիցների թվում էին ակադեմիկոս այնպիսի երեսփիշտներ, ինչպիսիք են դաշնակահար Իոսիֆ Հոֆմանը (նա այն ժամանակ ընդամենը 20 տարեկան էր), ջութակահար Իվան Գրժիմալին, երգչուհի Վարվառա Զարուգնայան։ «Московские ведомости» թերթը, ըստ արժանվույն գնահատե-

¹ „Русский листок“, 1895, 29 նոյեմբերի։

լով այդ հետաքրքրական համերգը, նշել է Ամիր-
ջանի ունեցած մեծ հաջողությունը:

Այս ամենը առիթ էն դառնում, որ Ամիրջանը
հրավիրվի Մոսկվայի Մեծ թատրոն՝ որսին մե-
ներգիչ:

1896-ի ապրիլի 5-ին Մեծ թատրոնում Ամիր-
ջանին տրվում է նախնական դերքուտ՝ Ամոնաս-
րոյի դերերգը «Աիդա» օպերայում: Հենց դերքու-
տի օրը «Театральные известия» թերթը այդ
առթիվ բանաստեղծություն էր ղետեղել, ողջու-
նելով հայ երգչի մուտքը Մեծ թատրոն:

Ամոնասրոյի դրամատիկ բնույթի դերերգը Ա-
միրջանը վատաբարում է իսկական ներշնչանքով,
արտահայտչորեն ու ազդեցիկ: «Աիդայի» ներ-
կայացմանը նրա հետ բեմ էին ելել նշանավոր
արտիստներ Կլեմենտեր (Ռադամես), Դեյշա-Աի-
ռնիցկայան (Աիդա) և Շտանգեն (Ամնեթիս):

Այդ դերքուտը ցույց տվեց, որ Ամիրջանը ի-
րավամբ կարող է արժանի տեղ գրավել Մեծ թատ-
րոնի արտիստական կազմում: «Ամիրջանի դե-
րքուտը, — նշել է մամուլը, — միանգամայն բա-
րեհաջող էր: Արտիստը հափշտակությամբ խա-
ղաց ու երգեց և շատ դուր եկավ հասարակությա-

նը: Ամիրջանն անտարակույս, պետքական ուժ
կլինի մեր օրինակելի թատրոնի խմբում»:¹

Մեծ թատրոնի դիրեկցիան դերյուստից հետո
որոշում է Ամիրջանին հրավիրել թատրոն, եռամ-
յա ժամկետով պայմանագիր կնքելով նրա հետ:

1896—97 թվականների թատերաշրջանում,
սեպտեմբերից սկսած Ամիրջանը Մեծ թատրոնում
հանդես է գալիս «Աիդա», «Դև», «Ֆաուստ»,
«Ռոմեո և Ջուլիետա» օպերաներում:

Մեծ թատրոնի բեմում նրա մասնակցությամբ
տրված ներկայացումներից առաջիններից մեկը
Վալենտինի դերն էր «Ֆաուստում», որով, ինչպես
արդեն վերը նշեցինք, նա Մոսկվայում առաջին
անգամ բեմ դուրս եկավ նոր էրմիտաժ թատրո-
նում՝ իտալական խմբի հյուրախաղերի ժամա-
նակ: Այս անգամ Ամիրջանի խաղընկերները Մեծ
թատրոնի արտիստական առաջատար ուժերն էին՝
Ա. Ֆոստրենկը (Մարգարիտ), Լ. Դոնսկոյը (Ֆա-
ուստ), Ս. Վլասովը (Մեֆիստոֆել), Ե. Զբրուևան
(Մարթա) և Պավլենկովան (Զիբել): Վալենտինի
դերերգը կատարելիս Ամիրջանը աչքի ընկավ
երգչական հարուստ կարողությոններով, կերպա-

¹ «Театральные известия», 1896, 8 ապրիլի:

րի գծագրման գրավչությամբ ու ամբողջականությամբ: Այդ մասին մամուլում գրվել է.

«Վալենտինի դերերգը երգում էր հենց լինթա-
ցիկ տարում Մեծ թատրոն հրապիրված պ. Ամիր-
ջանը, ի դեմս որի կայսերական թատրոնների
դիրեկցիան արժեքավոր ձեռքբերում (ունեցավ:
Արտիստի խաղացանկում Վալենտինի դերերգը
լավագույններից է: Նրա կատարումը, որ ըի էր
ղգացմունքով և նրբագեղությամբ, հարուցեց հա-
սարակության աղմկալի հավանությունը»:¹

Այսպիսով, Մոսկվայի լավագույն օպերային
թատրոնում Ամիրջանը ամենօրյա շփման մեջ է
մտնում ռուսական օպերայի վարպետների հետ,
մասնակցելով թատրոնի խաղացանկը զարգարող
մի շարք ներկայացումների:

Մոսկվայի Մեծ թատրոնն այդ ժամանակ ու-
ներ առաջնակարգ պրոֆեսիոնալ ուժեր, ըստ ա-
մենայնի ամուր մի կոլեկտիվ՝ իր ճանաչված մե-
ներգիչներով, երգչախմբով և նվագախմբով: Նրա
գեղարվեստական ղեկավարությունն իրականաց-
նում էին նշանավոր արվեստագետներ՝ դիրիժոր
Ի. Կ. Ալտանին, խորմեյստեր Ու. Ի. Ավրանեկը,

¹ «Новости сезона», 1897, 5 նոյեմբերի:

ռեժիսոր Ա. Ի. Բարցալը: Մեներգիշների կազմն
ընտրված էր օպերային արվեստին ներկայացվող
ամենաբարձր զեղարվեստական պահանջների հա-
մաձայն: Այստեղ, մեներգիշների թվում էին լի-
րիկո-կոլորատուրային սոպրանո Ա. Ա. Ֆոմտրե-
մը, դրամատիկ սոպրանոներ Մ. Ա. Դեյչա-Սիո-
նիցկայան, Ա. Մ. Մարկովան, մեցցո-սոպրանո
Ե. Ի. Զբրուևան, տենորներից՝ Լ. Դ. Դոնսկոյը և
Լ. Մ. Կլեմենտևը, բարիտոններից Պ. Ա. Խոխլո-
վը և Բ. Բ. Կորժովը, բասերից՝ Ս. Գ. Վլասովը և
Ս. Ե. Տրեգովինսկին:

1897 թվականի ապրիլ 24-ը հիշարժան օր է
ռուս օպերային արվեստի պատմության մեջ: Այդ
օրը Մեծ թատրոնում դերյուս է ունենում երիտա-
սարդ Լեոնիդ Սոբինովը: Այստեղ, «Դևի» ներկա-
յացման մեջ նրա խաղընկերն էր Ամիրջանը: Ռուս
օպերային թատրոնի պատմաբան, սովետական
երաժշտագետ Վ. Վ. Յակովլևն այդ մասին հետև-
յալն է հիշատակում. «1897 թվականին, Ռուբին-
շտեյնի «Դևի» ներկայացման մեջ, որտեղ Ամիր-
ջանն երգում էր համանուն դերերգը, Սինոզալի դե-
րում էր անհայտ մի երիտասարդ իրավաբան, որ
հաստատ որոշել էր օպերային ձեռքի ղառնալ:
Փորձի ժամանակ լսելով նրա ձայնը, Ամիրջանը

քաջալերում է հուզվող երիտասարդ արտիստին և կանխագուշակում նրա հետագա փայլուն հաջողութիւնը: Ամիրջանը շփալվեց: Լեոնիդ Վիտալևիչ Սոբինովը շուտով համաշխարհային հռչակի հասավ: Հետագայում Սոբինովը շատ անգամ է երախտագիտութեամբ հիշել Ամիրջանի ընկերական ջերմ վերաբերմունքը, այն, որ նա իր ըսկըմանակ բեմական ընկերոջ հանդեպ մարդկայնորեն այդքան տւշադիր ու զգայուն դտնւից...»¹

Մեծ թատրոնում Դեի կենտրոնական դերում առաջին անգամ հանդես գալով, Ամիրջանը նորից հավաստեց իր երաժշտական-բեմական արվեստի լայն հնարավորութիւնները: Բայց Ամիրջանի խնդիրն այս անգամ առանձնապես ծանր ու դժվար էր այն պատճառով, որ Մոսկվայի տեսել էր Դեի այնպիսի փորձված դերակատարների, ինչպիսիք են Պ. Ա. Խոխլովը և Բ. Բ. Կորյուովը: Երիտասարդ Ամիրջանն այնոսամենայնիվ, պատվով դուրս եկավ դժվարին քննութիւնից և հանդիսականների մոտ շատ ջերմ ընդունելութիւն դտավ:

¹ Վ.Վ. Յակովլև, «Հայ երգիչները սովետական օպերային բեմում», անտիպ հոգված (1947): Ձեռագիրը գտնւվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում:

«Շնորհալի բարիտոնը,— գրել է «Մշակը» — այս անգամ ևս ցույց տվեց իր ընդունակությունը և արժանացավ անվերջ ծափահարություն»¹:

Մեծ թատրոնի ներկայացումներից զատ Ամիրջանը 1896—97 թվականների թատերաշրջանում մի շարք համերգային ելույթներ է ունեցել, որոնք չեն վրիպել մամուլի ուշադրությունից: Այսպես, 1897-ի հունվարի 15-ին Ամիրջանը Մոսկվայում մասնակցում է Ազնվական ժողովարանի փոքր դահլիճում տրված համերգին, հրգում է օպերային բազմաթիվ արիաներ, փնչաբես նաև ումաններ, որոնց թվում՝ Սաբինդիարյանի «Այվարդը»: Հաջորդ ելույթն իւնեկում է Պետերբուրգում, մարտի 17-ի համերգում, որին մասնակցում են նաև Գ. Կազաչենկոն՝ իր կազմակերպած երգեցիկ խմբով, հրգիչ Ն. Շահլամյանը և ուրիշներ:

Մամուլում այդ համերգի վերաբերյալ գրվել է. «Երբեք Վարկային ընկերության համերգային դահլիճում այդքան աղմկալից և միահամուռ ծափահարություններ չեն եղել, քնչպես մարտի 17-

¹ «Մշակ», 1897, № 51.

ին... Ամիրջանն այստեղ իրեն ցույց տվեց որպես լիովին ձևավորված երգիչ՝ արտակարգ ուժղին, հնչեղ և ճիշտ դրված ձայնով, որ երգում էր անարատ, անկեղծ զգացմունքով: Այսպիսի բարի-տոնները հազվագյուտ են և անկատկած, պ. Ամիրջանը կարող է ուզածդ բեմի, ներառյալ մեր պետերբուրգյան թատրոնի, զարդը դառնալ»:¹

Թերթերի վկայությամբ հիշյալ համերգում 40- ից ավելի համերգներ են կատարվել: Ամիրջանի լեռնյթի ծրագրում են եղել հատվածներ տարբեր օպերաներից՝ «Պալադների» պրոլոգը, Դեյի արիան՝ «Մի լար, տրդյակս», արիաներ «Աֆրիկուհի» և «Կարմեն» օպերաներից, ինչպես նաև հայկական երգեր՝ «Հազար լեռանի» և «Արաքսի արտատուրը»: Տվյալ համերգին անդրադարձել են նաև «Петербургская газета»-ն «Пуч» և այլ թերթեր:

Հետաքրքրական է թերթերից մեկում ուս կոմպոզիտոր-թեորետիկ, պրոֆեսոր Ն. Ֆ. Սոլովյովի (Մակար Եկմալյանի ուսուցչի) արած հետևյալ դիտողությունը. «Ինչպես Ամիրջանը, այնպես էլ համերգին մասնակցող տենոր Շահլամյանը

¹ «Новости и биржевая газета», 1897, 19 մարտի:

հաստատում են վաղուց հայտնված այն կարծիքի
ճշտությունը, որ հայ ժողովուրդը ձայնելով հա-
րուստ է: Դժբախտաբար, այդ հարստությունը ա-
ռաջներում օգտագործվում էր սահմանափակ
կերպով, իսկ ձայնեղ երգիչները եկեղեցական եր-
գեցողությանից ու աշխարհիկ ժողովրդականից
սովորաբար այն կողմ չէին անցնում»:¹

Ամիրջանի մյուս երկու համերգներից առաջինը
տեղի է ունենում մարտի 31-ին՝ Մոսկվայում՝ Լ.
Վ. Սոբինովի և Մ. Ա. էյսենվարդի հետ համա-
տեղ,² իսկ հաջորդը՝ Թիֆլիսում, մայիսի 28-ին,
մասնակցությամբ Երզնուհի Դե-Վոս Սոբոլևայի:³

1897—98 թթ. թատերաշրջանում Ամիրջանը
Մեծ թատրոնի բեմում ունեցել է 18 ելույթ, ըստ
որում նրա խաղացանկում լինել «Ռոգենդալից»՝
իշխանի, «Ռոմեո և Ջուլիետայից»՝ վերոնյառն
հերցոգի և «Ֆաուստից»՝ վալենտինի դերերը:
Սակայն հետևյալ թատերաշրջանում (1898—
99 թթ.), որը վերջինը եղավ Ամիրջանի համար,
ներկայացումներին նա մասնակցում է ընդամենը
7 անգամ: Այս համագամանքը, ամշուշտ, չէր կա-

¹ «Биржевые ведомости», 1897, մարտի 19.

² «Новости сезона». 1897, ապրիլի 2.

³ «Մշակ», 1897, №63.

րող շմտահոգել Ամիրջանին: Բայց դրան մենք
կանդորադառնանք քիչ հետո: Տվյալ թատերաշր-
ջանում արտիստի դերացանկում նորություններ
էին «Հաղթանակող սիրտ երգը» և «Տրուբադուրը»:

Ա. Յու. Աիմոնի օպերան՝ «Հաղթանակող սիրտ
երգը», որ առաջին անգամ էր բեմադրվում, իհար-
կե, գեղարվեստական իր արժանիքներով զիջում
էր Մեծ թատրոնի առաջին խաղացանկի մյուս
օպերաներին: Սակայն նրանում վտկալ-մեներգա-
յին և անտամբլային կատարման առումով հետա-
քրքրական նյութ կար: Մամուլն լի էր ժամանակին
խոսել է առդ. օպերայի երաժշտության և բեմա-
դրվածյան մասին: 1898 թվականի դեկտեմբերին
Ամիրջանը և Սոբինովը հանդես են եկել առդ. օպե-
րայի ներկայացման մեջ, Ամիրջանը՝ Մուցիոյի,
իսկ Սոբինովը՝ Ֆաբիոյի դերում: Երկու արտիստ-
ների դերակատարումների մասին էլ շատ նպաս-
տավոր կարծիք է հայտնվել մամուլում: Ամիր-
ջանի դերերգը համարվել է իր ձայնին շատ հա-
մապատասխան, հատկապես նշվել է երկրորդ
պատկերի գլխավոր արիայի գեղեցիկ վառարու-
մը: Անտամբլային ներդաշնակության տեսակե-
տից առանձնապես դատվիչ է եղել օպերայի երկ-

րորդ գործողությունը, որը երգել են Ամիրջանը,
Սոբիևսկի և Մարկովան (Վալերիա):

Նույն թատերաշրջանում, 1898-ի վերջին Ամիր-
ջանը կատարել է Դի Լունայի դերերգը «Տրուբա-
դուրում»: Մոսկվայից ուղարկված մի նամա-
կում, որ տպագրել է «Մշակը», այդ դերակատա-
րումը գնահատված է որպես շնորհալի արտիստի
կատարյալ հաղթանակը:¹

Նամակում հաղորդվում է նաև, որ ներկայաց-
ման երկրորդ գործողությունից հետո հանդիսատես-
ները Ամիրջանին են մատուցում մի շքեղ դափնյա
պսակ՝ պատրաստված Ա գլխատառի տեսքով:

Ահեք ասադյանք, որ Մեծ թատրոնում աշխա-
տելու երկրորդ տարում Ամիրջանի ելույթները ա-
կալաթիվ են եղել: Իր ինքնակենսագրության մեջ
Ամիրջանն այդ փաստը հիշատակել է ոչ միայն
մեծ ամսառանքով, այլև ակներև դժգոհությամբ:
Նա հատկապես դժգոհ էր Վ. Տելյակովսկուց, որն
այդ ժամանակ գլխավորում էր Մոսկվայի կայան-
քական թատրոնների դիրեկցիան: Ի դեպ ասեմք,
որ Վ. Տելյակովսկու անբարյացակամ և քմահաճ
վերաբերմունքը Ամիրջանի հետ մեկտեղ զգացել

¹ «Մշակ», 1899, հունվարի 9:

ենն այլ շնորհալի արտիստներ ևս: Ու թեև Ամիր-
ջանն իր արտիստական ուժերի ծաղկումն էր ապ-
րում և առաջնակարգ երգչի անուրանալի համ-
բավ ունեւ արդեն, Տելյակովսկին, փաստորեն
հաշվի չնստելով թատրոնի գեղարվեստական ղե-
կավարության հետ, աշխատում էր նրան ասպա-
րեզ շտալ, շներգրավել խաղացանկի այլ ներ-
կայացումներում: Շատ բնորոշ է, որ թատրոննե-
րի դիրեկցիան ոչ մի կերպ չընդառաջեց «Իշխան
Իգորում» և «Ռուսլանում» հանդես գալու վերա-
բերյալ արտիստի արտահայտած ցանկությանը:

Այսպիսով, ինչպես Ամիրջանն է ասել՝ Մեծ
թատրոնում փաստորեն նրան ծուլության էին սո-
վորեցնում: Միշնչդեռ օր-օրի աճող երգիչը ձգտում
էր նորաջնել տւ ավելի հարստացնել դերացանկը,
իր աճող ուժերը փորձել նորանոր ներկայացում-
ներում, մի խոսքով՝ ապրել արտիստական լիար-
յուն կյանքով: Դա Լեւնսական պահանջ էր նրա
համար: Ուստի հասկանալի է, թե ինչու Ամիրջա-
նը նախընտրում է պրովինցիալ թատրոնը և արձա-
կուրդ ձևակերպում՝ ստիպված առժամանակ հե-
ռանալով Մեծ թատրոնից, ուր այնպիսի վիճակի
մեջ էր դրվել, որ համիլթոնի սառեցնում էին նրա
ստեղծագործական ավյուրը: Կայսերական թատ-

լրոնների դիրեկցիայի թույլտվությանն ստանալով,
Ամիրջանն սկսում է գավառական օպերային խում-
բերում աշխատել, բայց հետագայում նա ասդարես
էլ դուրս է մնում Մեծ թատրոնից:

Ամիրջանի արտիստական կյանքում, այսպի-
սով, մի նոր շրջափուլ է սկզբնաւորւում:

Հերթական թատերաշրջանն սկսելով նոր մի-
ջավայրում, արտիստն ամենօրյա հոռն աշխա-
տանքի մեջ է ներքաշւում, որը հնարավորության
է տալիս նրան հետզհետեւ ընդարձակել իր խա-
ղաչանկը:

Իսկ մինչ այդ, 1899 թվականի մայիս ամսին
Ամիրջանը Եղույթներ է լսեցնում Վորոնեժի ամա-
ռային թատրոնում: Մայիսի 6-ին, «Աիդա» օպե-
րայի ներկայացմանը նրա հետ մասնակցում է
նաև իր հայրենակիցը՝ հայտնի երգչուհի Ե. Տեր-
յան-Կորդանովան: «Вороженский телеграф»-ը
այդ կապակցութեամբ գովեստի խոսքեր է ուղղել
թե Ե. Տերյան-Կորդանովային (Աիդա) և թե Ա-
միրջանին (Ամոնաարո): Այնուհետև, մայիսի 16-ին
Վորոնեժում ներկայացվում են «Պայացները» և
«Գլուղական պատիւը»: Առաջինում Ամիրջանի
խաղընկերներն էին նշանավոր արտիստներ Ա.
Դավիդովը (Կամիո) և է. Բրոջին (Տոնիո), իսկ

խնդր՝ Ամիրջանը վատարում էր Սիլվիոյի դերը: Հետաքրքրական է նշել, որ «Գյուղական պատիվ» օպերայի գլխավոր երեք դերակատարներն էլ հայ արտիստներ էին՝ Ն. Տերյան-Կորգանովան՝ Սանտուցցո, Արշ. Կոստանյանը՝ Տուրիդոս, և Ամիրջանը՝ Ալֆիո: Դիրիժորն էր Ի. Տրուֆֆին:

Մեծ թատրոնը թողնելուց հետո, 1899-ի սեպտեմբերից Ամիրջանը հիմնականում թատերաշրջանն անց է կացնում Պերմում, իսկ դարնան և ամռան ամիսներին ներկայացումներ տալիս Ռուսաստանի այլ քաղաքներում, ապա, հաջորդ թատերաշրջանը՝ Իրկուտսկում (1900—1901), հետո էլ՝ Կազանում և Սարատովում (1901—1902):

Պերմի օպերային խումբը գործում էր դիրիժորներ Մ. Գուլինկինի, Բ. Պլատնիկովի և ռեժիսոր Ն. Բոգոլյուբովի ղեկավարությամբ: Թատերաշրջանն աչստեղ տեւել է մինչև 1900-ի փետրվարի վերջը, իսկ աչնուհետև Ամիրջանը հանդես է եկել Ռյազանում և Նիժնի-Նովգորոդում: Պերմի խումբում Ամիրջանի խաղընկերներն էին եղել Զուբել-լինի-Ռյադնովան, էյգենը, Ասլանովան (սոպրանո), Լիդինան (մեցցո-սոպրանո), Ռեզնովը (տենոր), Օբրազցովը (բարիտոն), Գաբանկոն (բաս) և ուրիշներ: Բավական լաչն էր խմբի խա-



ԴԼ («ԴԼԻՐ»)



Տոմսկի («Պիկովալա դամա»)

ղացանկը, ուր ընդգրկված էին «Իշխան Իգորը», «Ռուսլան և Լյուդմիլան», «Պիկովայա դաման», «Մազեպան», «Դևը», «Ռոգոնեդան», «Տրուբադուրը», «Աիդան», «Լոենգրինը», «Ջիոկոնդան», «Աֆրիկուհին» և այլ օպերաներ:

«Пермские ведомости» թերթը խմբի ներկայացումներին պարբերաբար գրախոսություններ է նվիրել, որոնց մեջ բազմիցս դրվատական կարծիք է հայտնվել Ամիրջանի դերասրատարումների մասին (Ռուսլան, Իգոր, Դև, Կոչուբեյ, Նելյուսկո, Դի Լունա և այլն):

Թերթը մի առանձին ջերմությամբ է անդրադարձել Ամիրջանի բենեֆիսին՝ «Իշխան Իգոր» ներկայացմանը, որ տեղի է ունեցել 1900-ի հունվարի 25-ին. «պ. Ամիրջանի բենեֆիսը լիակատար հաջողություն ունեցավ: Բենեֆիցիանտին մատուցվեցին ծաղիկներ, թանկարժեք նվերներ, և յի միջի աչրոց՝ նրա բազում երկրպագուների վողմից ստորագրված ուղերձը: Արտիստի երկրպագուները նույնիսկ նրան անհարմար վիճակի մեջ դրին: Ամեն անգամ բեմում արտիստի երեալու ժամանակ նրանք ստիպում էին գործողությունն ընդհատել, ավելին՝ ներգելու արահին էլ (օրինակ, հայտնի արիադի կատարման ժամանակ) բենեֆի-

ցիւանտին լինն նետում թղթե ծաղիկներ, գուլնդ-
գուլն ժապավեններ: Ինչ վերաբերում է Ամիրջա-
նի վատարմանը, ապա այն լաւ էր քան ձեռքէն:
Ամեն ինչ նա գերազանց ներկայացրեց: Իգորի
արխան հասարակության միահամուռ պահանջով
կրկնվեց»:¹

1900-ի սեպտեմբերից Ամիրջանն Իրկուտսկում
է: Այստեղ նա մտնում է ռեժիսոր Ա. Ա. Կրավ-
չենկոյի և դիրիժոր Դ. Դ. Դուդիշկինի կազմակեր-
պած օպերային խումբը: Սեպտեմբեր ամսին Ա-
միրջանը ներգում է «Դև», «Աիդա», «Իշխան Իգոր»
օպերաներում, իսկ հետագա ամիսներին, բացի
նշվածներից, նաև «Պիկովայա դամա», «Ռուս-
լան և Լյուդմիլա», «Ասկոլդի գերեզմանը», «Ռոզ-
նեդա», «Ֆաուստ», «Կարմեն», «Սամսոն և Դա-
ւիլա», «Մարգարե», «Տրուբադուր», «Աֆրիկու-
հին», «Պայացներ» և այլ օպերաներում:

Ամիրջանի ելույթների բացառիկ հաջողության
վերաբերյալ մեզ պատկերացում է տալիս ստորև
բերվող նամակը՝ Իրկուտսկից, որ տպվել է «Նոր
դարում»: «Ահա երրորդ ամիսն է, — վարդում ենք
այնտեղ, — ինչ տեղիս քաղաքային թատրոնում

¹ «Пермские ведомости», 1900, 27 հունվարի:

սկսվել են օպերային ներկայացումները՝ մասնակցութեամբ մեր հայրենակիցներ Բ. Ամիրջանի (բարիտոն) և Ա. Կոստանյանի (տենոր): Խոսք չկա, որ հաղվադեպ երևույթ է տեսնել հայ դերասանին Սիբիրի մայրաքաղաքում: Ինչպես Ամիրջանը, այնպես էլ Կոստանյանը վարձ ժամանակամիջոցում այստեղ գրավել են ժողովրդի համակրութեամբ: Երկուսն էլ լավ դպրոց ունեն, ձայները՝ լավ, ռեպերտուարը՝ հարուստ: Մենք լրեսեցինք Ամիրջանին «Դև», «Ֆաուստ», «Ռուսլան և Լյուդմիլա», «Աիդա», «Պիկովայա դամա», «Սամսոն և Դաւիթ», «Աֆրիկոսին» և «Տրուբադուր» օպերաներում: Անցյալ ամսին՝ իր բենեֆիսին Ամիրջանը բազմաթիվ ընծաների արժանացավ, իսկ ցույցերին էլ վերջ չկար»¹

Իրերուտակում, դեկտեմբեր և հունվար ամիսներին, Ամիրջանը, շեղվելով բարիտոնի իր սովորական ամպլուայից, «Ֆաուստում» երգում է ոչ թե վալենտինի, այլ Մեֆիստոֆելի բասային դերերգը: Այս կապակցությամբ տեղական թերթը նկատել է. «Մեֆիստոֆելի դերակատարն էր պ. Ամիրջանը: Թեպետ տվյալ դերերգը բարիտոնի համար չէ,

¹ «Նոր դար» 1900, նոյեմբերի 25.

բայց արտիստը գուցե իր կյանքում առաջին անգամ՝ հենց Իրկուտսկում մի այդպիսի փորձ արեց և այն իսկապես միանգամայն անբասիր էր»¹։ Թերթն աշխուհետե Մոշել է Ամիրջանի վոկալ արվեստի կատարելությունը և այն հիացմունքը, որ յսարանն ապրել է Մեֆիստոֆելի քառյակներն ու սերենադը տանիքներին։

Ինչպիսի տեսմամբ ենք, Ամիրջանի Վերգչական լայն ձախճավալը նրան հնարավորություն է ընձեռել երգելու նաև բասային դերերգեր։ Բացի Մեֆիստոֆելից, նա տարբեր ժամանակ կատարել է բասային դերացանկին պատկանող այլ դերերգեր ևս՝ Սուտանին, ջրաղացպան («Զրահարս») Նիլականտա («Լակմե»), Կուչուբեյ («Մազեսար»)։

Աշնան-ձմեռային թատերաշրջանն Իրկուտսկում ավարտելով, Ամիրջանը 1901-ի ապրիլին վերևու ականգամ երգում է Կիևի օպերային թատրոնում։ Այստեղ հրուարիադերի էլին հրավիրվել բազմաթիվ ականավոր արտիստներ՝ Լ. Սոբինովը, Ն. Պապայանը, Լ. Տետրացինին, Ա. Բոլսկան, Լ.

¹ «Иркуские губернские ведомости», 1900, 17 դեկտեմբերի։

Յակովլևը, Ե. Ազերսկայան, Լ. Կլեմենտևը և ուրիշներ: Հյուրախաղերի հրավիրվածների մեջ էր նաև Ամիրջանը: Նա մասնակցեց «Պիկովայա դամա» և «Կարմեն» ներկայացումներին (26 և 29 ապրիլի), հաջողությամբ հանդես գալով Ելեցկու և էսկամիլիոյի դերերում: Այս ներկայացումներում Ամիրջանի հետ երգել է մեր նշանավոր հայրենակիցը՝ Նադեժդա Պասկայանը, «Պիկովայա դամա-յում» կատարելով Լիզայի, իսկ «Կարմենում»՝ Միքայելայի դերերգերը:

Ինչպես նշել է երաժշտական քննադատ Վ. Զեչոտտը, Ամիրջան-էսկամիլիոն դուր է եկել կիւնյան լսարանին:՝ Ըստ նրա տպավորության արտիստի վեպի կատարումը մաքուր և մեղմ է, թեև ձայնը սակավ թանձրությամբ է հնչում: Քրննադատի հարեանքիտե՛ն արած տվյալ դիտողությունը գուցե և սուբյեկտիվ ընկալման աղբասիք է փղել, քանի որ ընդհանրապես, Ամիրջանի ձայնի թանձրությունն ու հնչեղությունը միշտ էլ ընդգծվել է մամուլում՝ տարբեր ժամանակ տպագրված անհամար գրախոսություններում: Ընդամիսն չենք կարող ուշադրության չառնել, որ նույն

¹ „Киевская газета“, 1901, մայիսի 1:

այդ ելույթի մասին միանգամայն դրական խոսք է ասել մի այլ թերթ՝ «Киевское слово»-ն, էսկամիլիոյի վոկալ-բեմական կերպարի մեկնաբանումը գտնելով գրավիշ ու հոգեբանորեն ճիշտ:

Այնուհետև, Կիևից հետո, մայիս-հունիս ամիսներին Ամիրջանը դիրիժոր Ա. Ա. էյխենվալդի օպերային ընկերակցության կազմում ելույթներ է ունենում Հարավային Ռուսաստանի քաղաքներում (Նովոչերկասկ, Կերչ, Նիկոլաև, Օդեսա, Սիմֆերոպոլ և այլն), իսկ հուլիս-օգոստոս ամիսներին՝ նաև Նիժնի-Նովգորոդի տոնավաճառին: Այստեղ, օպերային ներկայացումներում երգել են հրուշակավոր Ֆ. Շալյապինը, ճանաչված արտիստներ Մեդեա և Նիկոլայ Ֆիգներները, Ե. Տերյան-Կորգանովան և այլն: Նիժնի-Նովգորոդյան տոնավաճառի եռուն շրջանում՝ 1901-ի օգոստոսի 26-ին «Իշխան Իգոր» ներկայացումով Շալյապինն իր երրորդ հյուրախաղն է տալիս: Նա կատարում է իշխան Գալիցկու դերը, իսկ Ամիրջանը՝ Իգորի:

Եւ այսպէս, Ամիրջանը մեծ արտիստ Շալյապինի հետ միեւնոյն անսամբլում լինելու, նրա խաղընկերն դառնալու ատիթ է ունենում՝ այն էլ ուսանական կշատիկ օպերայում, ուր ասանձում է ամենակենսադրոնական, ամենապատասխանատու

դերը: Դա ռուս լրատկանության սրայմաններում
Ամիրջանի արվեստի ճանաչման մի նոր և կարևոր
վկայությունն էր:

Հիշենք, որ Իգորի դերերգը հայ արտիստի ամենասիրած դերերգերից էր: Նա Իգոր է երգել Ռուսաստանի բազմաթիվ բեմերում և միշտ էլ՝ մեծ հաջողությամբ: Այդ են հաստատել թե՛ նրա հեղինակավոր արվեստակիրացները, թե՛ մամուլում տարբեր առիթներով տպագրված քննախոսականները: Ամիրջանի համբավը գնալով տարածվում է և նա լայն լսարանի սիրելին է դառնում՝ որպես ռուսական բեմերում հանդես եկող ամենաշնորհալի բարիտոններից մեկը:

Մամուլն այս մասին առատ նյութ է տալիս մեզ:

«Ամիրջանը, — գրել է «Голос Белостока» թերթը՝ արտիստի 1901 թվականին ունեցած հյուրախաղերի առթիվ, — լեռաժշտական խոշոր մեծություն է ռուսական օպերային բեմում, որ տասը տարի է արդեն, ինչ ռուսական բարիտոնների մեջ նշանավոր տեղերից մեկն է գրավում: Բավական է ծանոթանալ նրա դերացանկին՝ համոզվելու համար, թե որքան բազմազան է արտիստի ձևերը կատարումը: Տողերիս գրողը միշտ

կանխակալ է եղել Արքունական օպերայի ար-
տիստների՝ պրոփինցիայում տված համերգների
նկատմամբ, որովհետև բազմիցս համոզվել է, որ
պրոփինցիա են այցելում գլխավորապես արքու-
նական բեմի այն վեստերաները, որոնց օրբեմնի
փառքից հուշեր են մնացել և որոնց արքունական
բեմը հանդուրժում է սոսկ նրանց անցյալի նը-
կատմամբ եղած հարգանքի շնորհիվ: Բայց
այս անգամ մեզ՝ բելոստոկցիներիս առիթ է
ներկայանում լսել մի երգչի, տրն լիւր փառքի դա-
զաթին է, որի համար դեռևս չի հասել այն ցավա-
լի պահը, երբ ժամանակի անողորմ օրենքը տա-
ղանդին ստիպում է փառքից դեպի մոռացության
գիրկը գլորվել»:

1901—1902 թատերաշրջանում Ամիրջանը հը-
րավիրվում է Կազանյան—Սալատովյան օպերա,
որ գործում էր Ն. Ի. Սոբոլշիկով-Սամարինի գլը-
խավորությամբ: Այստեղ է հրավիրվում նաև
հմուտ դիրիժոր Վ. Ի. Սուկը, որն սկսում է աշխա-
տել լիբեռն հատուկ արտակարգ ջանասիրությամբ,
հրաշալիությեն հնչեցնելով «Մադենպա», «Ռուսլան
և Լյուդմիլա», «Վաճառական Կալաշնիկով»,
«Դև», «Մոցարտ և Սալյերի» «Թագավորի

հարսնացուն», «Դուբրովսկի», «Ուլիգուկտոս», «Կարմեն», «Աիդա», «Ֆաուստ» օպերաները:¹

Դիրիժոր Սոսկի հետ Ամիրջանի ունեցած խլույթները Սարատովում և Կազանում անցել են մեծ շուքով, մշտապես հրապուրելով հանդիսականներին:

Տվյալ թատերաշրջանում Ամիրջանի խաղընկերներն են եղել արտիստական այնպիսի ուժեր, լինչպիսիք են է. Մելոդիատը, Օ. Ասլանովան, Վ. Էյդենը, Ա. Կրավեցը, Մ. Մեդվեդևը, Ն. Բուշակովը, Յա. Սվետլովը, Ն. Տարասովը, Ն. Զիստյակովը և ուրիշներ:

Կազանում Ամիրջանի ունեցած գեղարվեստական բարձր հեղինակությունն է վկայել «Театр и искусство» հանդեսը, որի էջերում ասվել է. «Ամիրջանը Կազանում լայն ճանաչում տունի իր ձայնական տվյալներով և կատարման դրամատիզմով»:²

Սարատովում և Կազանում լույս տեսնող թերթերը, մասնավորապես Саратовский дневник»-ը և «Казанский телеграф»-ը միշտ էլ գնահատել

¹ Խմբի երկրորդ դիրիժորն էր Մ.Մ. Գուլինկինը, որն զբաղված էր խաղացանկի այլ ներկայացումներով:

² «Театр и искусство», 1901, №19, էջ 914

են Ամիրջանի արվեստը (Դև, Գրչագնոյ, Ամոնաս-
րո, Ուիգուլետտո, Նելյուսկո և այլն):

Ահա օրինակ, «Саратовский дневник»-ի կար-
ծիքը Ամիրջանի լավագույն դերակատարումներից
մեկի՝ Ուիգուլետտոյի մասին. «Զգացվում է,— նը-
շել է թերթը,— որ ամեն ինչ այստեղ մտածված
է՝ թե լերաժշտական առանձին ֆրագմենտի ջանա-
դիր մշակումը, թե այդ դժվարին դերերգի դրա-
մատիկական վատարումը: Երկրորդ գործողու-
թյան ամբողջ պատկերը, երրորդի արվան և վեր-
ջին գործողության լեզրամիակիչ պատկերը լի էին
էքսպրեսիայով և անմոռանալի տպավորություն
թողեցին:»¹

Թատերաշրջանի ավարտից անմիջապես հետո
Ամիրջանն աչքելում է Աստրախան, հանդես դա-
լով «Եվգենի Օնեգին», «Դև» և «Ուիգուլետտո» օ-
պերաներում, իսկ մայիսին, Մոսկվայի «Ակվա-
րիում» թատրոնում մասնակցում է իշխ. Մերեթե-
լու դեկավարած խարկովյան օպերային թատրո-
նի հյուրախաղերին:

Արդեն երեք տարի էր, ինչ Ամիրջանը չէր եղել
Մոսկվայում: Մեծ թատրոնը թողնելուց հետո ան-

¹ «Саратовский дневник», 1902, 9 փետրվարի:

ցած այս հռամայա ժամանակամիջոցում արտիստն իր խաղացանկը հարստացրել էր նոր դերերգերով, ընդհանրապես նրբացրել տւ ամէկի խորացրել իր կատարումը։ Ուստի նա մի առանձին տարախոսթյամբ էր վերստին հանդիարում մոսկովյան լսարանի հետ, որը նրան լավ գիտեք անցած տարիներին Եւույթներին։ Մոսկովայում Ամիրջանը երգում է «Պիկովայա դամայում» (Տոմսկի), «Սամսոն և Դաւիթում» (գլխավոր քուրմ), «Արդայում» (Ամոնասրո) և այլ օպերաներում։ Մամուլը կրկին արժանին է հատուցում ճանաչված արտիստին, նորից հիացական խոսք է ասում նրա դերակատարումների մասին։

Այսպէս, «Русский листок»-ը անդրադառնալով Ամիրջանի եւույթներից մեկին, հետեւյալն է գրել. «Սեն-Սանսի «Սամսոն և Դաւիթ» օպերայում գլխավոր քուրմի դերում էր պ. Ամիրջանը, որ առաջներում երգել է Մեծ թատրոնում։ Այն պահից ի վեր, երբ Ամիրջանը դադարել է երեւալ Մոսկովայի հորիզոնում, նա ձեռք է բերել բնական ավելի մեծ փորձ, և երեկ հաճելի էր համոզվել, որ լավագոյն երգիչ լինելուց բացի Ամիրջանը նաեւ տղիդ դերասան է»։¹

¹ «Русский листок», 1902, մայիսի 8։

Ամիրջանի այս և մյուս գերակատարումները գնահատել են մոսկովյան այլ թերթեր ևս («Курьер», «Московские ведомости», «Русское слово» և այլն):

1902—1903 թատերաշրջանում Ամիրջանը և ղեկ է առաջատար բարիտոն-մեներգիչ՝ դիրիժոր Ա. Ա. էյխենվալդի ղեկավարած ռուսական օպերային խմբում, որ անընդմեջ շրջագայության մեջ գրտնըվելով, ներկայացումներ էր տալիս Ռուսաստանի մի շարք քաղաքներում (Եկատերինոսլավ, Յալթա, Սիմֆերոպոլ, Պոլտավա, Ժիտոմիր, Լյուբլին, Կիև): Պետք է ավելացնել նաև, որ այս խմբում, որպես երկրորդ դիրիժոր աշխատել հայազգի Ալեքսանդր Ասլանովը, որի հետ, ի դեպ, Ամիրջանը ընկերական աերտ մտերմության մեջ էր:

1903-ի մայիսին Նոբելից այցելելով Մոսկվա, Ամիրջանը մասնակցություն է ունենում «Ակվարիում» թատրոնում դիրիժոր Ն. Ա. Միկլաշևսկու ղեկավարությամբ տրված օպերային ներկայացումներին («Ալդա», «Ֆաուստ», «Աֆրիկոհին»), իսկ ամռանը Նիժնի-Նովոգորոդում կազմակերպված տոնավաճառի օրերին հանդես է գալիս «Դուրրովսկի», «Պիկովայա դամա», «Կարմեն», «Բոհեմա» և այլ օպերաներում:

Հաջորդ թատերաշրջանին (1903—1904) Ամիրջանը հրավեր է ստանում աշխատելու Թիֆլիսի օպերային թատրոնում, որի ղեկավարությունն էր ստանձնել Ն. Ն. Ֆիզիկերը։ Ամիրջանը Թիֆլիսի բեմում երգել է ղլխավորապես «Ռուսլան և Լյուդմիլա», «Պիկովայա դամա», «Մազեպա», «Իռլանտա», «Դուբրովսկի», «Աֆրիկուհին», «Աիդա» և «Ֆաուստ» ներկայացումներում, ըստ որում, վերջին օպերայում կատարել է ոչ թե վաղեմական, այլ Մեֆիստոֆելի դերը։ Թիֆլիսում առանձնապես մեծ է եղել Ամիրջանի Հաջորդությունը «Ռուսլան և Լյուդմիլայում», իսկ նրանում արտիստի անձնավորած կենտրոնական կերպարն այսպես է գնահատել «Кавказ» օրաթերթը. «Ռուսլանը Ամիրջանի խաղացանկի լավագույն դերերգերից է։ Թե արտաքինով և թե մեկալ կատարմամբ Ամիրջանն անտարակույս, սքանչելի Ռուսլան է։ Ի դեպ «О, поле, поле» արիանում նա տալիս այնպիսի ցածր լյա, որին կարող է նույնանձնել ուղածդ բասը»։¹

Սակայն թատերաշրջանն անցկացնելուց հետո Ամիրջանը թողնում է Թիֆլիսը և մեկնում Պե-

¹ «Кавказ», 1903, նոյեմբերի 16:

տերբուրգ, դառնալով ժողովրդական տան օպերային թատրոնի առաջատար մենեջեր, ուր և աշխատում է վեց տարի անընդհատ:

Ժողովրդական տան օպերան Պետերբուրգում աշխատավորական խավերի մեջ գեղարվեստական լայն հեղինակություն էր վայելում: Նրա խաղացանկում հատուկ տեղ էր տրված հայրենական օպերային ստեղծագործություններին: Շքեղորեն ու ճաշակով են բեմադրվել «Ռուսլան և Լյուդմիլան», «Իշխան Իգորը», «Պիլովայա դաման», «Ռոզնեդան», «Դուբրովսկին» և ուսական այլ օպերաներ: Ամիրջանը դրանց մեջ, ինչպես միշտ, ստանձել է գլխավոր դերեր:

Վերն ասացինք, որ Թիֆլիսում Ամիրջանն աչքի է ընկել Ռուսլանի ցայտուն դերակատարումով: Նրա Ռուսլանը նույնքան գրավիչ ու գեղարվեստորեն լիավարտ է եղել նաև Պետերբուրգի ժողովրդական տան օպերային բեմում, ուր 1904—1905 թատերաշրջանում վերաբեմադրվել է Գլինկայի օպերան: Նոր ներկայացումն արժանացել է «Русская музыкальная газета»-յի հավանությունը, ընդ որում թերթը հատկապես հավաստի է համարել Ռուսլանի կերպարը: «Առաջին պլանում էին Ռուսլանը, Ռատմիրը և Ֆարլաֆը,

առանձնապես առաջին երկուսը: Վաղուց է, փնջ
մենք չէինք տեսել ու լսել այսպիսի փառավոր,
առնական, իրապես դյուցազն Ռուսլանի, որպի-
սին մեզ տվեց այ. Ամիրջանը: Թե ձայնով, թե
կազմվածքով և թե խաղով սա իսկական գլին-
կայական Ռուսլանն է»: ¹

Ամիրջան-Ռուսլանի այս բնութագիրը, այն էլ
հեղինակավոր երաժշտական թերթի էջերում՝ Ա-
միրջանի փատարոհական մեծ հմտությամբ աներկ-
բա հավաստումն էր, նրա արտիստական դրավիշ
անհատականության արժանի գնահատականը:

Ամիրջանի ողբական խաղացանկում խուշ-
դրդամ ձևն եղել նաև «Պիկովայա դամայում»
նրա կատարած բարիտոնային դերերգերը՝ սկզբ-
բում Ելեցկու, իսկ հետագայում՝ Տոմսկու: Ժողո-
վրդական տան օպերային թատրոնում նա սո-
վորաբար երգել է Տոմսկու դերերգը: «Այդ
օպերան,— կարդում ենք մամուլի քննախոսա-
կաններից մեկում,— ժողովրդական տանը առա-
ջին անգամ է այսպես փայլում հնչում: Խումբն
իր մեծաթիվ արտիստական կազմից առանձնապ-

¹ „Русская музыкальная газета“, 1905, №9—10, էջ

րել է ամենալավագույն ուժերին՝ տիկ. Զեկենս-
կայային (Լիզա), պ. պ. Մոսինին (Գերման) և
Ամիրջանին (Տոմսկի): Այս տրիոն, ինչ խոսք, գե-
րազանց է և հիանալի: Վառ տաղաժողովուն թո-
ղեց մասնավորապես պ. Ամիրջանը: Արտիստի
ձայնը գեղեցիկ էր հնչում, նա հակառական հաջո-
ղություն տնեցավ երեք քարտերի մատին բալետը
և «Если-б милые девицы» երգը կատարելիս»:¹

Ժողովրդական տան ներկայացումներից զատ
Ամիրջանը նաև համերգներ է ունեցել: Այսպես,
1906 թվականին Ամիրջանի ղեկավարությամբ և
մասնակցությամբ Պետերբուրգում համերգային
կատարմամբ ներկայացվում է «Եվգենի Օնեգինը»
(առանձին տեսարաններ, մենակատարային և
անսամբլային համարներ՝ դաշնամուրի նվագակ-
ցությամբ): 1908-ի նոյեմբերին և դեկտեմբե-
րին, Պետերբուրգի մի շարք արտիստների հետ
մեկտեղ (Մ. Դոբրնա, Ա. Լեմբա, Ռեզունով, Մոս-
կալցով և ուրիշներ) նա մասնակցում է Գլինկայի
անվան Երաժշտա-գեղարվեստական ընկերության
հավաքույթներին: -

¹ „Ведомости С.п.б. градоначальства“, 1906, 3
հունիսի:



Աղյուս Ամիրջան. 1902 թ.



Բեգլար Ամիրջանը Կոմիտասի և Գ. Գալքյանի հետ. 1909

1909 թվականին Ամիրջանը համերգային շրջագայության է մեկնում Անդրկովկասի քաղաքները: Օգոստոսի 13-ին, Թիֆլիսում Զուբալովի ժողովրդական տան դահլիճում կայացած մեծ համերգում նրա հետ ելույթ են ունենում նաև տեղական արտիստները: Բայց համերգային ծրագրի դերակշռող մասը կատարում է ինքը՝ Ամիրջանը: Այստեղ վարագույրը բացվելուն պես Ամիրջանին դիմավորում են որոտընդոստ ծափերով ու կեցցեներով: Հայրենակիցները շտեմնված հաճությամբ ու ոգևորությամբ են ընդունում տաղանդավոր արտիստի երգած ամեն մի համարը, մասնավորապես Դեյի արիան համաճումն օսերայից և Սպենդիարյանի «Այ վարդը»:

Արտիստն իր հաջորդ համերգներն անց է կացնում ջութակահար-վիրտուոզ Դավիթ Դավթյանի հետ համատեղ: Դրանք տեղի են ունենում Կարսում (սեպտեմբերի 20 և հոկտեմբերի 10) և Բարվում (հոկտեմբերի 24 և 28):

«Կարսից մեզ հաղորդում ան,— գրել է «Մըշակ» թերթը,— որ սեպտեմբերի 20-ին երգիչ Բ. Ամիրջանի և ջութակահար Դ. Դավթյանի համերգն անցել է շատ հաջող և լեփլեցուն դահլիճում: Առանձնապես հասարակության ուշադրություն է

գրավել Ամիրջանի կատարած արիան «Իշխան Ի-
գորից» և հայկական «Կռունկը», իսկ Դ. Դավ-
թյանը հմտորեն նվագել է Պազանինիի կոնցերտը
և իր հեղինակութունը՝ «Հայու ոգին»: Թե Ամիր-
ջանին և թե Դավթյանին հասարակութունը վար-
ձատրել է չե՞ր՞մ ծափահարությամբ: Արտիստները
համերգի եկամուտից 90 ոսբլի նվիրել են տեղի
ծխական դպրոցին»:¹

Բավական ընդարձակ է եղել հոկտեմբերի
10-ին Կարսում արված համերգի ծրագիրը: Բայց
պետք է նկատենք, որ «Պայացների» պրոլոգի,
Ռախմանինովի ու մանսների վոդքին ցավոք, Ա-
միրջանն այստեղ իր ծրագրում տեղ է տվել նաև
երկրորդական հեղինակների թույլ գործերին՝ Գը-
րևե-Սոբուլևսկայայի «Ճանճեր» և Պետրովի «Մի
հավատա» երգերին:

1910 թվականից, թողնելով ժողովրդական
տան օպերային թատրոնը, Ամիրջանն ղեկավարում
է մանկավարժական և համերգային գործունեու-
թյամբ: 1913-ի գեկտեմբերից նա Մոսկվայում իր
հայրենակիցների հետ սկսում է բեմադրության
նախապատրաստել Ռուբինշտեյնի «Դևը»՝ հայերեն,

¹ «Մշակ», 1906, սեպտեմբերի 26:

ուր ստանձնում է համանուն դերերգը: Ներկայացումը տեղի է ունենում 1914-ի հունվարի 14-ին, Մոսկվայի առևտրական ակումբում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ամիրջանը մշտապես և սիրով մասնակցել է հասարակական նախաձեռնություններ տրված համերգներին: Դրանցից մեկը կազմակերպվել է 1915 թվականի մարտի 25-ին, Պավլովսկի հասարիտալում, այնտեղ ապաքինվող վիրավոր զինվորների համար: Այդ համերգին, բացի Ամիրջանից, մասնակցել են Ե. Պ. Կորչագինա-Ալեքսանդրովկայան (ասմունք) Ռ. Ա. Զավետովսկին (ջութակ), օպերային արտիստներ Ի. Վ. Տարտակովը և Մ. Ա. Միխայլովան: Նույն տարվա ապրիլի 11-ին Պետրոգրադում կայացած համերգը նվիրվել է հայ զաղթականների օգնության ֆոնդին:

Ամիրջանի հետ միասին համերգում ելույթ են ունեցել Կրզիչներ Պ. Անդրեևը, Գ. Բոսսեն, ջութակահար Հ. Նալբանդյանը, էլեկտրադիայի Կրզիչ խումբը և սիմֆոնիկ նվագախումբը՝ Գ. Կազաչենկովի ղեկավարությամբ:

1916 թվականի վերջին Ամիրջանը, թողնելով Պետրոգրադը, մշտական բնակություն է հաստատում Թիֆլիսում: Նա այստեղ սկսում է մասնակցել

ցել Հայոց երաժշտական ընկերության համերգ-
ներին, բացի այդ, վոկալի դասեր է տալիս ընկե-
րության վրից ասեղծված երաժշտական ճեմարա-
նում: 1916-ի դեկտեմբերի 21-ին Թիֆլիսի Զու-
բալուկի թատրոնում Ամիրջանը ելույթ է ունենում
«Եվգենի Օնեգին» ներկայացման մեջ՝ Օնեգինի
դերում (դիրիժոր՝ Մ. Ե. Եվգենև):

Սովետական տալիսերին Ամիրջանը եռանդուն
աշխատանք է անում Թիֆլիսի երաժշտական
ուսումնարաններում, ինչպես նաև «Հայարտան»
երաժշտական ստուդիայում, իր հարուստ փորձը
հաղորդելով երիտասարդ, սկսնակ երգիչներին:
Դեռևս 1922 սեպտեմբերի 22-ին Թիֆլիսի Արհ-
միությանների տան դահլիճում Ամիրջանի վո-
կալ դասարանի սաները հանդես վն հալիս հաշ-
վետու համերգով: Նրանց հետ ելույթ է ունենում
նաև Ամիրջանը: Հիշարժան է 1924 թվականի հու-
լիսի 17-ին «Հայարտան» դահլիճում վայացած
երաժշտական երեկոն՝ մասնակցությանմբ Ամիր-
ջանի աշակերտ-աշակերտուհիների: Երեկոյի ծրա-
գիրն ընդգրկում էր ռումանսներ ու երգեր, հատ-
վածներ ռուսական և արևմտա-եվրոպական օպե-
րաներից: Կատարվում են Ռոսինիի, Ռիմսկի-Կոր-
սակովի, Ռախմանինովի, Սարենդիարյանի, Արա-

կիշվիլու և այլ կոմպոզիտորների վրեժալ ստեղծագործութունները, վրացական և հայկական ժողովրդական երգեր:

Ինչպես նշել է «Մարտակոչը», երեկոյում աչքի են ընկել Ամիրջանի ամենաավագ աշակերտ Նովանդ Սաֆարյանը (լիրիկո-դրամատիկական տենոր), օր. Այվազյանը (լիրիկական սոպրանո), Դերկաշևը (բաս), Անտաձեն (լիրիկական բարիտոն) և տիկ. Սահաթսազյանը (մեցցո-սոպրանո): «Այս համերգը պարզեց, — գրել է «Մարտակոչը», — որ Ամիրջանը մեծ ջանք է գրել իր աշակերտների ձայները մշակելու գործում»:

Բացառիկ հաջողութուն է ունեցել 1925 թվականի մարտի 8-ին Թիֆլիսում տրված համերգը, որի մասնակիցներն են եղել Բեգլար Ամիրջանը, Հևոն Իսեցկին և Ալեքսանդր Օգանեզաշվիլին: Լրսաբանը մեծ բավականություն չէ ընդունել Դերիարիան՝ Ամիրջանի կատարմամբ, որ մշտապես զարդարել է նրա համերգային լիտյոնները, Իսեցկու երգած Մեֆիստոֆելի սերենադը, Օգանեզաշվիլու նվագած Սահարին»:

Արդեն 65 տարեկան էր Ամիրջանը, երբ Նրեանում, 1933-ին հիմնադրվեց Հայաստանի պետական օպերային թատրոնը: Ամիրջանն այդ լուրն

ընդունեց մեծագույն տարախության զգացումով։
Դրանով իսկ նա տեսավ իր վաղեմի երազանքի
իրականացումը։ Բայց և միաժամանակ նա շատ
էր ակոսոսում, որ առաջացած տարիքն ու առող-
ջական վիճակը իրեն թույլ չեն տալիս ամփոջա-
կան մասնակցություն տնեկնալ հայկական օպե-
րային թատրոնի ստեղծագործական կյանքին։

Բ. Ամիրջանը վախճանվեց Թիֆլիսում, 1937
թվականի մայիսի 18-ին, 69 տարեկան հասա-
կում։



Բեգլար Ամիրջանն ապրել է արտիստական
բովանդակալից կյանք, ունեցել է արվեստակից-
ների արտակարգ լայն շրջան, մշտական շփման
մեջ լինելով ժամանակի նշանավոր շատ երգիչնե-
րի, ռիթմիկոսների ու երաժիշտների հետ։ Ազնիվ
ներշնչմամբ և հազվագյուտ նվիրվածությամբ
նա օսերային արվեստին է ծառայացրել իր երգ-
չական փայլուն ձիրքը, վայելելով առաջնակարգ
արտիստի բարձր հեղինակություն։ Նրա ժամանա-
կակիցներին, մանավանդ արվեստակիցներին մըշ-
տապես հիացրել ու նույնքան զարմացրել է այն

անհատնում եռանդը, հանդիսատեսի հետ շարունակ հաղորդակցվելու այն ուժգին ու անշահախնդիր ձգտումը, որն անհանդես է բերել իր բեմական բովանդակ գործունեության ընթացքում:

Իր տպավորիչ դերակատարումներով ու համերգային ելույթներով Ամիրջանը սիրված արտիստ է եղել թե Անդրկովկասյան և թե ռուսական քաղաքների բազմազան լսարաններում:

Մոսկվայի Մեծ թատրոնում և Պետերբուրգի Ժողովրդական տան օպերայում աշխատելուց բացի նա օպերային թատերաշրջաններ է անցկացրել նաև Պերմում, Իրկուտսկում, Կազանում, Սարատովում, Թիֆլիսում: Վերջապես, ներկայացումներով կամ համերգներով այցելել է բազմաթիվ այլ քաղաքներ՝ այդ թվում՝ Կիև, Խարկով, Օդեսա, Դոնի Ռոստով, Նիժնի-Նովգորոդ, Աստրախան, Սիմբիրսկ, Յարիցին, Սամարա, Ժիտոմիր, Վորոնեժ, Պոլտավա, Վլադիկավկազ, Նախիջևան, Օմսկ, Տոմսկ, Կուրսկ, Տամբով, Ռյազան, Կիսլովոդսկ, Նսենտուկի, Թեոդոսիա, Յալթա, Սևաստոպոլ, Սիմֆերոպոլ, Նիկոլաև, Խերսոն, Մարիուպոլ, Կերչ, Նովոչերկասկ, Նկատերինոսլավ, Տագանոգ, Բերդիչև, Վոլոգդա, Ռյաժսկ, Ռոմնո, Կովել, Լուցկ, Լյուբլին, Բրեստ, Բելոստոկ, Գրոդնո, Վիլնո, Դվինսկ, Միտտավա,

Ռիգա, Ռեկել, Վիբորգ, Պսկով, Օստրով, Գատչինա, Կրոնշտադտ, Պավլովսկ, Օրանիենբաում, Խաբարովսկ, Բլադովեշչենսկ, Չիտա, Վերխնեուգինսկ, Կրասնոյարսկ, Չելյաբինսկ, Կարս, Ղարաբիլիսա, Էջմիածին, Շուշի, Բաքու:

Արտիստի այցելած քաղաքների այս երկար ցանկն ինքնին շատ բան է ասում նրա գործունեության մասշտաբների, ինչպես և երաժշտասերների մեջ ունեցած ժողովրդականության մասին: Մամուլում զետեղված նյութերը հաստատում են, որ Ռուսաստանի քաղաքներում Ամիրջանի օպերային ելույթներն ու համերգները անցյալ դարի վերջին և այս դարասկզբին ջերմ ու անմիջական արձագանք են գտել արվեստասերների մեջ: Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում բերել 1900 թվականին Պերմի արվեստասերների ստորագրած և Ամիրջանին հասցեագրած ուղերձը, ուր նրանք արտահայտել են ճանաչված արտիստի հանդեպ ունեցած իրենց խորին հարգանքն ու հիացմունքը.

«Մեծարգո Բոգդան Բոգդանովիչ, թույլ տվեք մեզ այսօր, Ձեր բեմական տոնի օրը հայտնել մեր անկեղծ ու սրտագին շնորհակալությունը՝ էսթետիկական այն բարձր հաճույքի համար, որ Դուք տրվել եք մեզ Ձեր գեղեցիկ, զորեղ ձայնով և ներշնչող

կատարումով այնպիսի պատասխանատու դերեր-
գերի, ինչպիսիք են Իգորը, Ռուսլանը, Դևը, Նելյուս-
կոն և շատ ուրիշները: Դրա հետ մեկտեղ, օգտվում
հմայել վոկալ արվեստը սիրող լայն շրջանի
մարդկանց սրտերը, ինչպես հմայեցիք Պերմի Ձեր
երախտապարտ ունկնդիրներին»¹:

Մարդկային հոգու բարությունը տաղանդի լա-
վագույն զարդն է, և Դուք՝ բնությունից օժտված լի-
նելով թե՛ մեկով և թե՛ մյուսով, կկարողանաք,—
մենք դրանում համոզված ենք,— հետագայում ևս
հմայել վոկալ արվեստը սիրող լայն շրջանի մարդ-
կանց սրտերը, ինչպես հմայեցիք Պերմի Ձեր
երախտապարտ ունկնդիրներին»¹:

Մենք գիտենք, որ դեռևս իր առաջին ելույթնե-
րից սկսած Ամիրջանն ունկնդիրների ուշադրու-
թյունն անմիջապես գրավել է երգչական արտա-
կարգ վառ տվյալներով, որ երիտասարդի խոս-
տումնավոր ապագայի հիանալի երաշխիքն էին:
Սակայն այդ տվյալներին պետք է նաև գումարվեր
պրոֆեսիոնալ երգչի բարձր վարպետությունը, որ
առհասարակ ձեռք է բերվում միայն անդուլ ջան-

¹ Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի
թանգարան, երաժշտական արխիվ, Բ. Ամիրջանի ֆոնդ:

քերով, համառ աշխատասիրությամբ: Երիտասար-
դը գիտակցում էր, որ երգչին կատարման մեջ ա-
մենակարևորը գեղարվեստական հաղորդման խո-
րությունն է, ճշմարիտ ներշնչանքը, համոզիչ ար-
ասահայտչությունը: Այդ գիտակցությամբ է Ամիր-
ջանն աստիճանաբար հարթել իր արվեստի հարըս-
տացման ճանապարհը, հետևողականորեն ընդ-
լայնել երգչական բնութագրման միջոցները, խո-
րացել այս կամ այն դերերգի գեղարվեստական
մեկնաբանման մեջ:

Ինչպես նշում է ռուս օպերային թատրոնի պատ-
մաբան, երաժշտագետ Վ. Վ. Յակովլևը, Ամիրջանն
ունեւր «մեծ դիապազոնի և թավջա դուրեկան
աւեմբրի հյութեղ ձայն»:² Գրախոսները ժամանա-
կին շատ առիթներ են ունեցել հիացական խոսք ա-
սելու Ամիրջանի վոկալ կատարման, գեղեցիկ կան-
տիլենայի, մանավանդ հաճելի ձայնի մասին:

Ամիրջան-երգիչը հետևում էր այսպես կոչված
ազատ մաներայի երգեցողությանը, որ թույլ էր
տալիս նրան առավել ճկուն կերպով և բնականորեն
օգտագործել իր երգչական ռեսուրսները: Բարիտո-

² «Հայ երգիչները ռուսական օպերային բեմում»,
անտիպ հոդված, 1947:

նի համար ստեղծված լիրիկական և դրամատիկական դերերգերից բացի նա խաղացանկում ընդգրկել է նաև բասային որոշ դերերգեր, յուրատեսակ մի լրացում անելով իր հիմնական՝ բարիտոնային ամպլուային, որ բնավ էլ արհեստական ճիգերի արդյունք չի եղել:

Ամիրջանի արտիստական անհատականությունը հիմնականում ձևավորվել ու հասունացել է ռուսական իրականության պայմաններում, Բ. Ասաֆևի արտահայտությամբ ասած՝ «ռուսական ճշմարիտ երգեցողության ռեալիստական դպրոցի» անուրանալի և բարենպաստ ազդեցությամբ: Դեռևս պեսերբուրգյան ուսման տարիներին պարզորոշ երեվաց երիտասարդ երգչի վառ հեռանկարը: Այդ հեռանկարը տեսան նաև Միլանի կոնսերվատորիայում: Հատկանշական է, որ այստեղ անհրաժեշտություն չծագեց վերանայելու երիտասարդ երգչի անցած դպրոցը: Միլանի կոնսերվատորիայում Ամիրջանը շարունակեց պահպանել վոկալ կատարման մասնագիտական հմտությունների այն ամուր հիմքերը, որ նա ձեռք էր բերել ռուսական վոկալ դպրոցի հռչակված վարպետների՝ էվերարդիի և Գաբելի մոտ:

Հիշենք նաև, որ իտալական շրջանի ուսումնա-

ռության ընթացքում Ամիրջանի ուշադրությունը գլխավորապես ուղղված է եղել օպերային խաղացանկի և առաջին հերթին՝ իտալական օպերային նոր դերեղերի յուրացմանը, ընդ որում երիտասարդ երգիչը կարողացել է իրեն դերժ պահել երգեցողության մեջ ինքնանպատակ էֆեկտներով տարվելու զայնթակդությունից:

Ամիրջանն իր արվեստը հետզհետե հղկել ու ավելի ներգործուն է դարձրել՝ ստեղծագործորեն օգտվելով ռուսական օպերային թատրոնի և ռուս մեծ արտիստների ուսանելի փորձից: Եվ այդ փորձով հարստացած, հենվելով ռեալիստական ճշմարիտ արվեստի սկզբունքների վրա, նա աշխատել է օպերային կերպարների գեղարվեստական իմաստավորման մեջ ինքնուրույն լուծումներ գտնել ու հեռու մնալ այն ամենից, ինչ օպերային արվեստում սոսկ մեխանիկական, չմարսված կրկնությունն է գեղարվեստական ընդունված ավանդույթի: Մամուլի և ժամանակակիցների վկայությամբ Ամիրջանի օպերային պերսոնաժները սովորաբար ունեցել են երաժշտական և բեմական կենդանի ու դինամիկ բնութագրեր՝ հոգեբանորեն պատճառաբանված մեկնաբանմամբ: Նա ձգտում էր համոզիչ ու հավաստի զարգացման մեջ ներկայացնել իր հե-

րոսների դիմանկարները, իհարկե, թույլ չտալով
ինքնահնարանքներ և չհեռանալով հեղինակային
մտահղացումից:

Արտիստի լավագույն դերակատարումներում,
բնականաբար, ավելի ցայտուն, ավելի ամբողջա-
կանորեն են երևացել նրա կատարողական ոճի ու-
րույն կովանները, գեղարվեստական հղացումների
յուրահատուկ կողմերը: Այս առումով նրա դերա-
ցանկում առանձնապես նշանակալից են եղել արև-
մրտա-եվրոպական օպերային ստեղծագործու-
թյունների կերպարներից Ամոնասրոն («Աիդա»),
Ռիգոլետտոն (համանուն օպերայում), Դի Լունան
(«Տրուբադուր»), Նելյուսկոն («Աֆրիկուհին»), Տո-
նիոն («Պայացներ»), Ժերմոնը («Տրավիատա»),
Վալենտինը («Ֆաուստ»), Էսկամիլիոն («Կարմեն»),
իսկ ռուսական օպերային կերպարներից՝ Դեը (հա-
մանուն օպերայում), Ռուսլանը («Ռուսլան և Լյուդ-
միլա»), Իգորը («Իշխան Իգոր»), Գրյազնոյը («Թա-
գավորի հարսնացուն») և այլն:

«Ամիրջանի օպերային խաղացանկը, — գրել է
Վ. Վ. Յակովլևը, — բավականաչափ բազմազան էր:
Նրան հեշտ էին հաջողվում լիրիկական դերերգերը,
ինչպիսիք են Դեը, Ժերմոնը «Տրավիատայում», Դի
Լունան «Տրուբադուրում», բայց արտիստին ա-

ռանձնապես մոտ էին դրամատիզմով հագեցած դերերը՝ Ամոնասրոն («Աիդա»), Տոնիոն («Պայացներ»), Նելյուսկոն («Աֆրիկուհին») և այլն: Նա հաջող էր երգում նաև իշխանի դերերը Սերուվի «Ռոդենեդայում», որ նոր էր վերաբեմադրվել Մեծ թատրոնում»:¹

Ծիշտ է նկատել Վ. Վ. Յակովլևը, որ Ամիրջանի արտիստական տեմպերամենտը, երաժշտական-բեմական տվյալները շատ են համապատասխանել դրամատիկական մեծ լիցքի կերպարներին: Նման կերպարներ մարմնավորելու համար արտիստը, հրգչական հմտության հետ մեկտեղ, անշուշտ պիտի ունենա բեմական բազմակողմանի ձիրք, բեմի սուր զգացողություն:

Ամիրջանի կերտած դրամատիկական լայն շնչի օպերային կերպարներից է, օրինակ, Ամոնասրոն, որ մշտապես եղել է արտիստի խաղացանկում:

Ժամանակին մամուլն ընդգծել է Ամիրջան-Ամոնասրոյի տպավորիչ խաղակերպը՝ Աիդայի հետ, Նեղոսի ափին ունեցած հանդիպման տեսարանում, ինչպես և դրամատիկորեն լարված այլ դրվագներում: Ամիրջանն այստեղ կարողանում էր հարուստ

¹ Տես Վ.Վ. Յակովլևի նույն հոդվածը:

հրանդներ գտնել Ամոնասրոյի դերապատկերը գծելու համար, աչքի ընկնելով հերոսի խռովահույզ և անհանգիստ մտորումների ու զգացումների հավաստի հաղորդամբ, հրաժշտական ճկուն ու իմաստալից ֆրազավորմամբ:

Արտիստը կատարել է Ռիգոլետտոյի դերը Վերդիի համանուն օպերայում, որ բավական դժվարին դերերգ է՝ դրամատիկական-լիրիկական խորոնկ բնագրկումներով լի: Սիրասուն իր աղջկա դժբախտ ճակատագրի համար տառապող հոր՝ Ռիգոլետտոյի հոգեկան տաղնապալից ապրումներն արտիստը դրբեշմել է մեծ էքսպրեսիայով, արտակարգ հուզիչ կատարմամբ: Մենք առիթ ունեցանք անդրադառնալու մամուլի տված փնահատականին, որ վերաբերում է արտիստի այդ դերակատարմանը:

Ամիրջանն հատկապես իր արտիստական տարերքում է եղել օպերայի վերջին գործողության մեջ: Այստեղ հանդիսականներին ուղղակի սքանչացրել է Ռիգոլետտոյի ծավալուն մենախոսությունը՝ սրտառուչ մի դրվագ, որ հնչել է իսկապես ցնցող ողբերգականությամբ: Միաժամանակ, Ռիգոլետտոյի դերերգը կատարելիս Ամիրջանը անսամբլի նուրբ զգացողության շատ գեղեցիկ օրինակ է տվել:

Ամիրջանի ուսական խաղացանկում գեղար-

վեստորեն ծանրակշիռ դերերգեր էին Դևը (Համանուն օպերայում) և Գրյազնոյը («Թագավորի Հարսնացուն» օպերայում):

Դևի դերերգը նա առաջին անգամ Մեծ Թատրոնում է կատարել: Ահա թե ինչպիսինն է եղել այդ դերակատարումը բանաստեղծ Ա. Մատուրյանի տպավորությամբ. «Ամիրջանը Մեծ Թատրոնում կատարեց Դևի ծանր ու պատասխանատու դերը, — գրել է նա: Նույն բեմի վրա մենք նրան տեսել ենք ուրիշ օպերաներում՝ «Աիդա», «Ֆաուստ», «Ռոմեո և Ջուլիետա», սակայն այդ օպերաներից և ոչ մեկում արտիստի դերն այնպիսի մեծ նշանակություն չի ունեցել, ինչպես այստեղ, քանի որ Դևը Համանուն օպերայի կենտրոնն է կազմում:

Ամիրջանի ձայնը, անկասկած, հարուստ ու զուրեղ է: Բավական դուրեկան է նաև ձայնական տեմբրը: Բարձր նոտաները նա առնում է ամենայն հեշտությամբ և կարողանում է բավական ժամանակ պահել նույն բարձրության վրա, որ մեծ առավելություն է...

Իր արտաքինով Ամիրջանը գեղեցիկ Դև էր՝ բարձր հասակ, վայելուչ կազմվածք, դեմքի արտահայտիչ զծագրություն, որ այնքան նշանակություն



Մուցիս

(Հաղթանակի սիրտ եզր)



Էսկամիլիո («Կարմեն»)

ունի բեմում՝ մանավանդ տվյալ դերի համար: Ամիրջանը երգում էր զգացմունքով ու ճաշակով»:¹

Այո, Դևի դերերգն իրոք շատ մեծածավալ է, գեղարվեստական իմաստավորման տեսակետից՝ բարդ: Թեև առաջին ներկայացման մեջ Ամիրջանը հաջողություն է ունեցել, բայց և հնարավոր է, որ նա, այնուամենայնիվ, իրեն մինչև վերջ չի բացահայտել: Հայտնի է, որ Ամիրջանը սիրել է Դևի կերպարը և հետագայում այն ավելի կատարյալ, ավելի գրավիչ է դարձրել:

Այդ կերպարի լիակատարությունն է վկայում, օրինակ, «Киевская газета»-ն, որի կարծիքը բերում ենք ստորև.

«Դևի դերերգը, — գրել է Թերթը, — կատարում էր Ամիրջանը, և այս ներկայացման մեջ, ըստ արժանվույն նրան էր պատկանում առաջնության դափնին: Արտիստն ունի մեծ ու գեղեցիկ ձայն, առանձնապես փայլուն՝ վերին ռեգիստրում և երգում է հմտորեն: «Не плачь, дитя» հայտնի արիան նա այնպիսի բարձր էֆեկտով կատարեց, որ դահլիճում ծափահարությունների փոթորիկ առաջացրեց»:²

Բացի վերը նշված արիայից, Ամիրջանին այս

¹ «Մշակ» 1897, № 54:

² «Киевская газета», 1903, 2 հունվարի:

օպերայում նույնքան հաջողվել է Դևի առաջին արիա-մենախոսությունը («Проклятый мир»), հրորորդ գործողության արիողոն («На воздушном океане») և վերջապես, երգումը ֆինալում («Клянуся я первым днем рождения»):

Ամիրջանը հստակորեն է ըմբռնել այս դերերգի լիրիկական-ռոմանտիկական բնույթն ու բուն բովանդակությունը: Նա ձգտել է աստիճանաբար «մարդկայնացնել» Դևին, ներկայացնել նրան ոչ իբրև վերացական ու անըմբռնելի ոգի, այլ խորապես մարդկային գծերով, երկրային էությունմբ, ընդգծելով Դևի հոգու քնքշությունը, վիշտն ու տառապանքը, ազնիվ սիրո տվայտանքները:

Դևի սքանչելի դերակատարներից հետո, որպես սիք էին՝ Պետերբուրգում Լ. Յակովլևը, իսկ Մոսկվայում Բ. Կորսովը և Պ. Խոխլովը: Ամիրջանը ճանաչվել է որպես այդ դերը ռուսական բեմում հրմտորեն մեկնաբանողներից մեկը: Հետագայում արդեն, Դևի կերպարի փայլուն մեկնաբանումով հանդես եկավ հանճարեղ Շալյապինը, որն իր արտիստական կյանքի սկզբնաշրջանում սովորաբար կատարում էր Ռուբինշտեյնի այս օպերայի բասային դերերգը (Գուգալ), իսկ Դևի դերերգը՝ զրված բարիտոնի համար, համեմատաբար ավելի ուշ հե-

տաքրքրեց նրան. (դերերգը հատկապես Շալյա-
պինի համար հարմարեցված էր, շատ տեղերում
տոնայնությամբ իջեցված):

Գրյազնոյի դերում («Թագավորի հարսնացուն»
օպերայում) Ամիրջանին հաջողվում էր շատ դի-
պուկ բնութագրել իր հերոսին՝ այդ ուժեղ և նեն-
գամիտ մարդուն, իր կրքերի մեջ սանձարձակ օ-
պրիչնիկին, բեմական սուր իրավիճակներում
քայլ առ քայլ բացելով Գրյազնոյի բիրտ ու դաժան
հոգու էությունը:

«Շատ հաջող Գրյազնոյ էր Ամիրջանը,— գրել
է «Киевская газета»-ն: Ուժգին ու արտահայտիչ
հնչեց առաջին գործողության նրա գեղեցիկ արի-
ան՝ «Куда ты, удаль прежняя, девалась». Ար-
տիստն անկեղծ զգացմունքով ներկայացրեց վերջին
պատկերը, երբ Գրյազնոյը՝ ի տես ամենքի զղշում
է իր կանխամտածված հանցագործության համար
և Մարֆայից ներումն խնդրում»¹:

Այստեղ գրախոսը մասնավորապես նկատի է
ունեցել Գրյազնոյի «Страдалица невинная,
прости» արիան, որի կատարման մեջ Ամիրջանը
սովորաբար իսկապես փայլել է: Ընդհանրապես,

¹ «Киевская газета», 1903, 4 հունվարի:

Գրյազնոյի ամբողջ դերերը Ամիրջանի համար շնորհակալ նյութ է եղել և նրանում արտիստը գրտել է երաժշտական-բեմական իր ձիրքը բազմակողմանիորեն բացահայտելու նորանոր հնարավորություններ:

Ամիրջանի օպերային խաղացանկի վառ դերակատարումներից են եղել նաև Իգորը («Իշխան Իգորում») և Ռուսլանը («Ռուսլան և Լյուդմիլայում»): Արտիստը ուս դյուցազունների առինքնող կերպարներ է կերտել, հիանալիորեն պատկերելով նրանց բարոյական գերազանցությունը թշնամիների հանդեպ:

Ամիրջանի Իգորը, ինչպես դա կարել է եզրակացնել մամուլի տված գնահատականներից, եղել է հստակ նկարագրի ու ամբողջական մի կերպար: Արտիստը հայրենասիրական ջերմ շնչով է երգել Իգորի արիան («Ни сна, ни отдыха»), հաղորդելով նրա հուզական ու արտահայտչական ամբողջ հմայքը:

«Ամիրջանի հզոր բարիտոնը,— գրել է «Театр и искусство» հանդեսը,— անչափ համապատասխան է Իգորի դերերգին»:²

² «Театр и искусство», 1906, №47; էջ 722

Խորապես հմայիչ է եղել նաև Ամիրջանի անձ-
նավորած Ռուսլանը: Նրա կատարմամբ Ռուսլանի
արիան («О, поле, поле») հնչել է երաժշտական
երանգների բացառիկ գրավչությամբ՝ արիայի թե
լիրիկական-խոհական սկզբնամասում, թե հերո-
սական բնույթի դրվագում:

«Русская музыкальная газета»-յի հայտնած
կարծիքն այն մասին, որ Ամիրջանն իր ձայնով,
արտաքինով և խաղով իսկական գլինկայական
Ռուսլան է, — այդ դերակատարման անվիճելիորեն
բարձր գեղարվեստականության վկայությունն է:
Նույն այդ թերթը նաև աննկատ չի թողել Ամիր-
ջան-Ռուսլանի հանդեպ լսարանի ունեցած համա-
կերանքը, հատկապես ընդգծելով, որ «հասարա-
կությունը բացառիկ ուշադրությամբ էր ընկալում,
նույնիսկ ավելին՝ կարեկցանքով էր ընդունում
Ռուսլանի բացականչությունները»:¹

Այսպիսով, թե օպերային բեմում ստեղծած
կերպարներով և թե համերգային ելույթներով Ա-
միրջանը ցույց տվեց իր կատարողական արվեստի
ներշնչող գրավչությունն ու իրական հմայքը, ար-
վեստ, որ լիովին համապատասխանում էր ժամա-
նակի գեղարվեստական բարձր պահանջներին:

¹ «Русская музыкальная газета», 1905, № 9—10, էջ 279:

Ամիրջանի գործունեությունն իր արտակարգ արդա-
սավորությամբ անշուշտ, ստեղծագործական հա-
րըստացում բերեց հայ պրոֆեսիոնալ երգարվես-
տին. դա մի նոր առաջաքայլ էր անցյալի հայ երա-
ժշտական մշակույթի ընդհանուր վերելքի ճանա-
պարհին: Այդ վերելքն սկսվել էր հայ ժողովրդի
ազգային ինքնագիտակցության զարթոնքի, ազգա-
յին-ազատագրական շարժման աճող ակտիվաց-
ման ժամանակաշրջանում, երբ ազգային գրակա-
նության և գեղարվեստական մշակույթի տարբեր
ճյուղերի զարգացումն ավելի ու ավելի էր համակ-
վում ժամանակի դեմոկրատական գաղափարների
ոգով:

Առաջադիմական այդ ընդհանուր մթնոլորտի
պայմաններում հայ երաժիշտների կարևոր խնդիրն
էր յուրացնել համաշխարհային երաժշտական հա-
րուստ փորձը և դրա հիման վրա ըստ ամենայնի
զարկ տալ հայրենի երաժշտարվեստին, ժողովրդի
ինքնատիպ երաժշտական գանձերի լայն ու լիարժեք
վերհանմանը: Ասպարեզ եկած հայ առաջին պրո-
ֆեսիոնալ կոմպոզիտորները հայրենասիրական
այդ այդ գաղափարի նվիրված մարմնավորողներն
էին:

Անցյալ դարի վերջին տասնամյակներում ին-

տենսիվ զարգացման ճանապարհով սկսեց ընթա-
նալ նաև հայ պրոֆեսիոնալ երգարվեստը: Այդ բը-
նադավառում են գործել նշանավոր այնպիսի ու-
թեր, ինչպիսիք են Նլենա Տերյան-Կորգանովան,
Ներսես Շահլամյանը, Նադեժդա Պապայանը,
Մադդալինա Գենջյանը, Արշակ Կոստանյանը և
ուրիշներ: Հայ պրոֆեսիոնալ երգիչների այս խում-
բին է պատկանել նաև Բեգլար Ամիրջանը: Շատ
նշանակալից է, որ Ամիրջանի, ինչպես և իր տա-
ղանդավոր այլ հայրենակիցների արվեստը մեկու-
սի չի մնացել սոսկ տեղային սահմանափակ շրը-
ջանակներում:

Ամիրջանը, ուր էլ որ նա լիներ, երբեք չէր մո-
ռանում հայրենի երգերը և դրանց կատարումը հա-
մարում էր իր՝ հայրենասեր երգչի սրբազան
սլարտքը: Իր համերգային ծրագրերում, ուսև և
արևմտաեվրոպական կոմպոզիտորների ու մանս-
ների ու օպերային արիանների կողքին Ամիրջա-
նը միշտ էլ տեղ է տվել հայրենի ժողովրդական և
գուսանական երգերին, հայ հեղինակների ստեղ-
ծագործություններին: Տարբեր ժամանակ նրա
հայկական երգացանկում հնչել են «Կռունկը»,
«Ձայն տուր, ով ծովակը», «Ողջուն տվեք իմ հայ-
րենյացը», «Արաքսի արտասուքը», Բաղդասար

Դպիրի «Ի ննջմանե արքայականը», Սայաթ-Նովայի «Զիս ասումը», Զիվանու «Պաղ աղբյուրի մոտը», Եկմալյանի «Լոեց...», Կոմիտասի «Ծիրանի ծառը», Սպենդիարյանի «Այ վարդը», Տեր-Ղևոնդյանի «Շեխ Սաֆոն», Մայիլյանի «Ծովի երգը» և այլն: Ամիրջանը հայ երգի և ումանսի նախանձախնդիր տարածողն էր ոչ միայն հայրենի միջավայրում, այլև ուսական իրականության պայմաններում: Ըստ որում, կարևոր է նշել, որ հայ երգարվեստի այդ նմուշները նա երգել է զորովալից սիրով, բարձր ճաշակով, գեղարվեստական խոր մեկնաբանմամբ, զգալով դրանց ազգային կոլորիտի ինքնատիպությունը, մեղեդիական նրբությունն ու արտահայտչականությունը:

Նրա կատարած երգերից մեկը՝ «Պաղ աղբյուրի մոտը», ինչպես հիշատակում է թառիստ Ներսես Ղորղանյանն իր ինքնակենսագրության մեջ, 20-ական թվականներին գրի է առնվել ձայնապլենակի վրա, իր իսկ՝ Ղորղանյանի նվագակցությամբ: Ափսոս, որ այդ ձայնագրությունը այժմ չկա հրապարակի վրա:

Ամիրջանը շատ հաճախ է համատեղ ելույթներ ունեցել հայ երգիչների ու երաժիշտների հետ: Օպերային բեմում հայ արվեստասերներից նրա

խաղընկերներն են եղել Ն. Պապայանը, Ե. Տեր-
յան-Կորգանովան, Ա. Կոստանյանը, իսկ համերգ-
ներում նրա հետ մեկտեղ ելույթ են ունեցել Ն.
Պապայանը, Ն. Շահլամյանը, Հ. Նալբանդյանը,
Դ. Դավթյանը, Ն. Ղորղանյանը, Ա. Օգանեզաշվի-
լին, Լ. Իսեցկին:

Միաժամանակ արտիստը շփման մեջ էր հայ
երաժշտության այնպիսի խոշոր դեմքերի հետ,
ինչպիսիք են Կոմիտասը, Կարա-Մուրզան, Եկմալ-
յանը, Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյա-
նը:

Կոմիտասի հետ նրա հանդիպումներից մեկը
տեղի է ունեցել 1909 թվականի սեպտեմբերին՝
կաթողիկոսական օժման օրերին: Կոմիտասի հրա-
վերով Ամիրջանը էջմիածին է մեկնել՝ մի քանի օր
հյուրընկալվել նրա մոտ: Պահպանվել է Կոմիտա-
սի, Ամիրջանի և Դ. Դավթյանի՝ հենց այդ ժամա-
նակ արված խմբային լուսանկարը: Ամիրջանը, որ
մեծ ակնածանք ուներ Կոմիտասի հանդեպ, էջ-
միածնում հյուրընկալվելիս նրան է նվիրել իր լու-
սանկարը՝ հետևյալ մակագրությամբ. «Բ. Ամիր-
ջանը այս յուր պատկերը նվճրում է ի հիշատակ
սիրո ու բարեկամության՝ զերապատիվ հայր Կո-
միտաս վարդապետին. էջմիածին, 1909, 13 սեպ-
տեմբերի»: Իսկ լուսանկարի մյուս երեսին ավելա-

յըրեկ է նաև. «Անմոռանալի հիշատակ մեր անց-
կացրած սքանչելի օրերի՝ 13—15 սեպտեմբերի,
1909, ս. էջմիածնում՝ օծման առթիվ»։¹

էջմիածնում Ամիրջանը մասնակցել է պատա-
րագի կատարմանը: «Երգեցիկ խումբը,— հիշա-
տակում է «Արարատ» հանդեսը,— երգում էր պա-
տարագին՝ Կոմիտասի ղեկավարությամբ և մաս-
նակցությամբ հայազգի հայտնի երգիչ Ամիրջա-
նի»²: Պատարագին մասնակցելուց բացի Ամիրջա-
նը էջմիածնական հյուրերի պատվին կազմա-
կերպված ընդունելությանը մեծ շուքով երգել է
«Ձալն տուր, ով ծովակիր»:



Բեզլար Ամիրջանն անուրանալի մեծություն է
եղել հայ երգարվեստում: Նա հայազգի առաջին
պրոֆեսիոնալ երգիչներից է, որ համարձակորեն
դուրս գալով կատարողական մեծ ասպարեզ, իր
արվեստով հիացրել է ոչ միայն հայրենակիցնե-

¹ Տես Ե. Չարենցի անվան զրադանության և արվես-
տի թանգարանի երաժշտական արխիվի կոմիտասյան
ֆոնդը:

² «Արարատ», 1909, № 9, էջ 707:

րին, այլե փայլել է թե իտալական քաղաքների,
թե Մոսկվայի, Պետերբուրգի և ուսական այլ քա-
ղաքների բեմերում:

Հայրենասիրական ջերմ զգացմունքով է նա
կատարել հարազատ ժողովրդի երգերը, երազել
հայկական օպերային թատրոնի ստեղծման մա-
սին, որի բեմում, ավա՛ղ, նա այդպես էլ բախտ
չունեցավ երգելու:

Ամիրջանը հայ պրոֆեսիոնալ երաժշտական-
կատարողական արվեստի պատմության մեջ է մը-
տել շատ գնահատելի ու մեծակշիռ ավանդով: Նա
իր արժանավոր տեղն ունի այդ արվեստի առաջին
խոշոր վարպետների շարքում:

- Դիւնկա — «Իվան Սուսանին» — Սուսանին
 Դիւնկա — «Ռուսլան և Լյուդմիլա» — Ռուսլան
 Դարգոմիժսկի — «Ջրանարս» — ջրաղացյան
 Թուրինշտեյն — «Դե» — Դե
 Թուրինշտեյն — «Մակկավեյ» — Հուդա
 Թուրինշտեյն — «Վանառական Կալաշնիկով» — Կալաշնիկով
 Չայկովսկի — «Պիկովայա դամա» — Ելեցկի
 Չայկովսկի — «Պիկովայա դամա» — Տոմսկի
 Չայկովսկի — «Եվգենի Օնեգին» — Օնեգին
 Չայկովսկի — «Մագեսյա» — Կոչուբեյ
 Չայկովսկի — «Չարոդեյկա» — Իշխան Կուրլյատև
 Չայկովսկի — «Իռլանտա» — Թոբերտ
 Չայկովսկի — «Իռլանտա» — Էրն Խակիա
 Չայկովսկի — «Օպերիչնիկ» — Իշխան Վյազմինսկի
 Ռիմսկի-Կորսակով — «Թագավորի հարսնացուն» — Գրյազնոյ
 Ռիմսկի-Կորսակով — «Սադկո» — Վեդենեցյան հյուր
 Մուսորգսկի — «Բորիս Գոդունով» — Բորիս
 Բորոդին — «Իշխան Իգոր» — Իգոր
 Սերով — «Ռոգենդա» — Իշխան Կառմիր արև
 Վերստովսկի — «Ասկուլդի գերեզմանը» — անհայտ
 Նապրավնիկ — «Ֆրանչեսկա դա Լիմինի» — Ջանչիոտտո
 Նապրավնիկ — «Թուրովսկի» — Տրոեկուրով
 Սիմոն — «Հաղթանակող սիրո երգը» — Մուցիո
 Ռոսսինի — «Սեիլյան սափրիչ» — Ֆիգարո
 Պոնկիելլի — «Ջիոկոնդա» — Բարնաբա
 Վերդի — «Ռիգոլետտո» — Ռիգոլետտո
 Վերդի — «Տրուբադուր» — Դի Լունա

Վերդի — «Օրելլո» — Յագո
 Վերդի — «Պարահանդես-դիմականանդես» — Իենաաո
 Վերդի — «Էոնանի» — Կարլ 5-րդ
 Վերդի — «Աիդա» — Ամոնաւրո
 Վերդի — «Տրավիատա» — Ժերմոն
 Գոնիցետտի — «Յավորիտունի» — Ալֆոնս
 Բելլինի — «Պուրիտաններ» — Ռիկարդո
 Մասկանի — «Գլուղական պատիվ» — Ալֆիո
 Լեոնկավալլո — «Պայացներ» — Սիլվիո
 Լեոնկավալո — «Պայացներ» — Տոնիո
 Պուչչինի — «Բոհեմա» — Մարսել
 Վագներ — «Տանհոյզեր» — Վոլֆրամ
 Վագներ — «Լոկեզրին» — Յրիդրիս ֆոն Տելրամունդ
 Բիզե — «Կարմեն» — Էսկամիլիո
 Գելիք — «Լակմե» — Նիլականտա
 Գունո — «Ռոմեո և Ջուլիետտա» — Վերոնյան հերցոգ
 Գունո — «Յաուստ» — Վալենտին
 Գունո — «Յաուստ» — Մեֆիստոֆել
 Մեյերբեր — «Աֆրիկուին» — Նելյուսկո
 Մեյերբեր — «Հուզենոտներ» — Նևեր
 Մեյերբեր — «Մարգարե» — Կոմս Օբերտալ
 Սեն-Սանս — «Սամսոն և Դալիլա» — գլխավոր ֆուրմ
 Օբեր — «Յրա դյավոլո» — Բեպպո
 Մոնյուշկո — «Կալկա» — Յանուշ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՐԻԴՈՐԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆ

խմբագիր՝ Ա. Ա. ԲԱՐՍԱՄՅԱՆ

նկարիչ՝ Բ. Վ. ՄԱՋՄԱՆՅԱՆ

Գեղ. և տեխ. խմբագիր՝ Վ. Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ս. ԲԱՐՍԱՆ



ՎՖ 04031

Պատվեր 2139

Տպաքանակ՝ 1000

Հանձնված է շարվածքի 16/XII 1974 թ.:


Ստորագրված է տպագրության 2/IV 1975 թ.:

Թուղթ տպագրական № 1, $60 \times 90^{1/32}$, տպագր. 2,12 մամ.:

Հրատ. 1,8 մամ. + 5 ներդիր: Գինը՝ 19 կոպ.:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
№ 1 տպարան, Երևան-9, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Комитета по делам издательств поли-
графии и книжной торговли Совета Министров Арм.
ССР. Ереван-9, ул. Алавердяна, 65.



ԳԻՆԸ 19 ԿՈՊ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0053490

ЦЕНА

AT

13937